ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Բովանդակություն

1.Ներածություն 3

2. Ղարաբաղյան հիմնահարց 5

3. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում, մարդկության դեմ հանցանքների կանխարգելման օրակարգ 11

4. Ռուսաստանի Դաշնություն 12

5. Ամերիկայի Միացյալ Նահանգներ 14

6. Եվրոպական միություն 17

7. Հարևան երկրներ 20

7.1 Վրաստան 20

7.2 Իրանի Իսլամական Հանրապետություն 22

7.3 Թուրքիայի Հանրապետություն 23

8. Եվրասիական տարածաշրջանի երկրներ 23

9. Եվրոպական երկրներ 26

10. Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներ 33

11. Միջին արևելքի և Աֆրիկայի երկրներ 35

12. Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրներ 39

13. Միջազգային բազմակողմ համագործակցություն 40

13.1. Միավորված ազգերի կազմակերպություն 40

13.2 Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն 42

13.3 Եվրոպայի խորհուրդ 43

13.4 Անկախ պետությունների համագործակցություն 46

13.5 Եվրասիական տնտեսական միություն 46

13.6 Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն 47

13.7 Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն 48

13.8 Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն 48

14. Միջազգային տնտեսական համագործակցություն 49
15. Մարդու իրավունքների պաշտպանության հարցեր 51
16. Գլոբալ անվտանգության և ոչ կոնվենցիոնալ խնդիրներ 52
17. Խաղաղապահ գործունեություն 52
18. Իրավապայմանագրային դաշտ 53
19. Հյուպատոսական ծառայություն 53
20. Հանդիպումներ և փոխադարձ այցելություններ 55
21. Դիվանագիտական հարաբերություններ 55
22. Դիվանագիտական դպրոց 56
23. Միջազգային հանրային կարծիք 56

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված **44-օրյա ագրեսիվ պատերազմին հաջորդած 2021 թվականի ընթացքում** ՀՀ դիվանագիտական ծառայության ջանքերն ուղղված են եղել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում և նրա մանդատի ներքո **ԼՂ հակամարտության** խաղաղ կարգավորման շուրջ բանակցությունների լիարժեք վերսկսմանը: Տարվա ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները և համանախագահող երկրներն ընդունել են **ավելի քան մեկ տասնյակ հայտարարություններ՝** անդրադառնալով հայտնի սկզբունքների և տարրերի հիման վրա Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական կարգավորման, մարդասիրական հարցերի հասցեագրման, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանությանը:

Շարունակվել են աշխատանքները Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների և պատանդների ազատ արձակման խնդրին միջազգային արձագանք ապահովելու, Ադրբեջանի նկատմամբ այդ հարցում միջազգային ճնշում գործադրելու, ինչպես նաև համալիր քայլերի շնորհիվ Ադրբեջանում ապօրինի պահվող հայ ռազմագերիներին հայրենիք վերադարձնելու ուղղությամբ:

Երկկողմ ձևաչափերով և միջազգային կառույցների շրջանակներում (ԵԽ, ՄԱԿ, ԵԱՀԿ) տեղի ունեցած հանդիպումներում Հայաստանը շարունակել է միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել ԼՂ դեմ ռազմական ագրեսիայի ընթացքում և դրանից հետո Ադրբեջանի կողմից իրականացրած մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումներին, ներառյալ՝ հայկական մշակութային և կրոնական ժառանգության ոչնչացման, ամենաբարձր մակարդակով հայատյացության դրսևորումներին: Ջանքերն ուղղված են եղել Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած տարածքներում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության պաշտպանությանը, այդ գործին միջազգային կառույցների ներգրավմանը:

Ցեղասպանության կանխարգելման ՀՀ օրակարգի շրջանակներում **հունիսի 22-ին** ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի **43-րդ նստաշրջանի** ընթացքում կոնսենսուսով ընդունվել է ՀՀ ներկայացրած **«Ցեղասպանության կանխարգելում» խորագրով բանաձևը:**

Ապրիլի 24-ին ԱՄՆ նախագահ Ջոզեֆ Բայդենը հանդես է եկել Հայոց ցեղասպանությունը ճանաչող հայտարարությամբ: Լատվիայի խորհրդարանը **մայիսի 6-ին** պաշտոնապես ճանաչել և դատապարտել է Հայոց ցեղասպանությունը:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակական աշխատանքներ են իրականացվել բարեկամ երկրների հետ դաշնակցային բարիդրացիական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև տարածաշրջանում խաղաղության օրակարգի առաջմղման ուղղությամբ:

Անտեսելով միջազգային հանրության կոչերը և Հայաստանի Հանրապետության հանձնառությանը տարածաշրջանում խաղաղություն հաստատելու հարցում՝ Ադրբեջանը շարունակել է իր ագրեսիվ և ոչ կառուցողական քաղաքականությունը և **2021թ. մայիսի 11-ի լույս 12-ի գիշերը**, երբ Ադրբեջանի զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներ ներկայացնող մի շարք խմբեր ապօրինաբար հատել են Հայաստանի Հանրապետության սահմանը և դիրքավորվել Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչի հետևանքով Սյունիքի մարզի Սև լճի տեղանքում վերջիններս մինչև 3,5 կմ խորացել են ՀՀ ինքնիշխան տարածքում:

Ադրբեջանական զինուժի հաջորդ ներխուժումը Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածք տեղի է ունեցել **2021թ. նոյեմբերի 14-ին:** Հայ-ադրբեջանական սահմանագծի արևելյան տեղամասերից մեկում Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները զրահատեխնիկայի աջակցությամբ ներխուժել են Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածք, որի հետևանքով չորս հայկական հենակետեր հայտնվել էին շրջափակման մեջ: ՀՀ ինքնիշխան տարածք ներխուժած ադրբեջանական զինտեխնիկան և զորքը բանակցությունների արդյունքում դուրս են եկել ՀՀ տարածքից, ՀՀ ՋՈՒ ստորաբաժանումները դուրս են բերվել վերոնշյալ չորս մարտական դիրքերի շրջափակումից: Այնուամենայնիվ՝ նշված հատվածում շարունակում են դիրքավորված մնալ դեռևս մայիսին ՀՀ ինքնիշխան տարածք ներխուժած ադրբեջանական զինծառայողներ:

2021 թվականին շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, մեր երկրի միջազգային հեղինակության ամրապնդմանն ուղղված աշխատանքները: Հանրապետության նախագահի, վարչապետի, ԱԳ նախարարի մի քանի տասնյակ հարցազրույցներ են հրապարակվել միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներում: ՀՀ վերաբերյալ հաղորդաշարեր և հոդվածներ պատրաստելու նպատակով Հայաստան են այցելել մի շարք հեղինակավոր միջազգային լրատվամիջների ներկայացուցիչներ, այդ թվում՝ Agence France-Presse, the Economist, Le Monde, BBC, Le Figaro Magazine, VICE News, Al Jazeera, Россия 24, ТАСС, Deutsche Welle և այլն: Ընդհանուր առմամբ 2021 թվականին ՀՀ ԱԳՆ-ում կարճաժամկետ հավատարմագրում է ստացել **ավելի քան 500** օտարերկրյա լրագրող:

Հաշվետու ժամանակահատվածում կայացել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի, ԱԳ նախարարներ Արա Այվազյանի և Արարատ Միրզոյանի՝ արտերկիր կատարած թվով **43 պետական, պաշտոնական և աշխատանքային այցեր:**

Տեղի են ունեցել օտարերկրյա **23 բարձրաստիճան պատվիրակությունների** պաշտոնական և աշխատանքային այցելություններ Հայաստանի Հանրապետություն:

2. Ղարաբաղյան հիմնահարց

2021 թվականին ջանքերն ուղղված են եղել **ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում** և նրա մանդատի ներքո ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ բանակցությունները վերսկսելուն:

Հունվարի 11-ին Մոսկվայում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հանդիպումը:

Սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 76-րդ նստաշրջանի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ և մասնակցությամբ տեղի է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների հնգակողմ հանդիպումը:

ԵԱՀԿ համանախագահության ձևաչափով հաջորդ հանդիպումը տեղի է ունեցել **նոյեմբերի 10-ին Փարիզում՝** Ֆրանսիայի արտգործնախարար Լը Դրիանի նախաձեռնությամբ: Հնգակողմ հանդիպման ընթացքում քննարկվել են մարդասիրական բնույթի հարցեր: Հայկական կողմն ընդգծել է իր դիրքորոշումը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը լիարժեքորեն վերականգնելու առնչությամբ: Վերահաստատվել է լարվածության նվազեցման և մարդասիրական խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ սադրանքների և հայատյաց հռետորաբանության անընդունելիությունը:

Նոյեմբերի 26-ին Սոչիում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հանդիպումը:

ԵԱՀԿ համանախագահության ձևաչափով հաջորդ հանդիպումը նախատեսված էր անցկացնել **դեկտեմբերի 1-ից 3-ը Ստոկհոլմում՝** ԵԱՀԿ ամենամյա նախարարական վեհաժողովի շրջանակներում, սակայն ադրբեջանական կողմը վերջին պահին չեղարկել է հանդիպումը՝ մտացածին դրդապատճառներով:

Ստոկհոլմում՝ ԵԱՀԿ ամենամյա նախարարական խորհրդաժողովի ընթացքում, ԵԱՀԿ մասնակից պետությունների մեծամասնության, ինչպես նաև մի շարք միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից հստակ ընդգծվել է ԼՂ հակամարտությունը ԵԱՀԿ ՄԽ համանախագահության ձևաչափում բանակցությունների միջոցով կարգավորելու անհրաժեշտությունը:

Դեկտեմբերի 15-ին Բրյուսելում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հանդիպումը:

Դեկտեմբերի 16-ին Բրյուսելում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հանդիպումը:

Դեկտեմբերի 17-ին հայկական կողմի ջանքերով ԵԱՀԿ գործող նախագահության՝ **Շվեդիայի** կողմից կազմակերպվել է «ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի կողմից հասցեագրվող հակամարտությունը. նախորդ տարվա ռազմական գործողությունների հետևանքներից դեպի քաղաքական կարգավորում» խորագրով համաժողովը, որի շրջանակներում քննարկվել են հակամարտության վերափոխման հնարավորությունները, մարդասիրական խնդիրների հասցեագրումը և քաղաքական գործընթացի վերագործարկման ուղիները:

Տարվա ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները և համանախագահող երկրներն ընդունել են **11 հայտարարություն**, որոնցում անդրադարձել են հայտնի սկզբունքների և տարրերի հիման վրա Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական կարգավորմանը, մարդասիրական հարցերի հասցեագրմանը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղ մարդասիրական մուտքի, մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանության, վստահության ամրապնդման անհրաժեշտությանը, ինչպես նաև հայ-ադրբեջանական սահմանամերձ տարածքներում ռազմական գործողությունների դատապարտմանը:

ԵԱՀԿ Մինսկ խմբի համանախագահ երկրների անունից այդ երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները քաղաքական բարձր մակարդակում հաստատել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության մանդատի շրջանակներում ԼՂ հակամարտության չլուծված հարցերի կարգավորման անհրաժեշտությունը:

Տարվա ընթացքում երկկողմ ձևաչափերով և միջազգային կառույցների շրջանակներում (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ) տեղի ունեցած հանդիպումներում Հայաստանը շարունակել է միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել Արցախի դեմ

ռազմական ագրեսիայի ընթացքում և դրանից հետո Ադրբեջանի կողմից իրականացրած մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումներին, ներառյալ՝ հայկական մշակութային և կրոնական ժառանգության ոչնչացման, ամենաբարձր մակարդակով հայատյացության դրսևորումներին, «ռազմավարի պուրակի», հայ գերիների խոշտանգումների, նրանց վերադարձի համար արհեստական խոչընդոտներ ստեղծելու փաստերին, ինչպես նաև ՀՀ տարածքային ամբողջականության նկատմամբ ոտնձգություններին՝ սադրանքներին պատշաճ գնահատականների ապահովման նպատակով: Իրականացված աշխատանքի արդյունքում **Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար** Դունյա Միյատովիչը **ապրիլի 27-ին** նամակ է հղել Ադրբեջանի նախագահին, որում մտահոգություն է հայտնել **«ռազմավարի պուրակի», հայատյացության դրսևորումների, ատելության խոսքի տարածման առնչությամբ**:

Բացի այդ **ԵԽԽՎ Միգրացիայի, փախստականների և տեղահանված անձանց հարցերով կոմիտեի** կողմից ընդունվել է **«Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության հումանիտար հետևանքները/ԼՂ հակամարտություն» զեկույցը**: Իսկ **Մայիսի 20-ին Եվրոպական խորհրդարանը 607 կողմ ձայնով** ընդունել է հայ գերիներին անհապաղ վերադարձնելու կոչ անող բանաձև: Բանաձևն անդրադառնում է նաև պատերազմի ընթացքում քաղաքացիական բնակչության թիրախավորման, հայերի նկատմամբ ատելության խոսքի և դրա տարատեսակ դրսևորումների, ԼՂ հայ ազգաբնակչության և մշակութային ժառանգության պաշտպանության, ինչպես նաև **մայիսի 12-ին** ադրբեջանական ԶՈՒ կողմից ՀՀ ինքնիշխան տարածք ներխուժման և ՀՀ տարածքային ամբողջականության խախտման խնդիրներին:

Շարունակվել են աշխատանքներն Ադրբեջանում ապօրինի պահվող հայ ռազմագերիների և պատանդառված քաղաքացիական անձանց ազատ արձակման խնդրին միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելու, Ադրբեջանի նկատմամբ այդ հարցում միջազգային ճնշում ապահովելու ուղղությամբ:

ՀՀ ԱԳ նախարարի անունից գերիների խնդրի վերաբերյալ նամակներ են ուղարկվել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշին, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով բարձր հանձնակատար Միշել Բաչելետին, ԵԽ մարդու իրավունքների հարցերով հանձնակատար Դունյա Միյատովիչին, ինչպես նաև տասնյակ պետությունների արտաքին գործերի նախարարների:

Բացի այդ, ՀՀ ԱԳ նախարարը գերիների վերադարձի հարցը բարձրացրել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում, այդ թվում՝ Ադրբեջանի ԱԳ նախարարի հետ

սեպտեմբերին 23-ին Նյու Յորքում և **նոյեմբերի 10-ին** Փարիզում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում:

Գերիների խնդիրն արծարծվել է նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարություններում, այդ թվում՝ համանախագահող երկրների անունից **դեկտեմբերի 7-ին** շրջանառված հայտարարության մեջ:

Գերիների հարցի առնչությամբ փաստաթղթեր են տարածվել Նյու Յորքում, Ժնևում, Ստրասբուրգում, Վիեննայում, Բրյուսելում գործող միջազգային կազմակերպություններում: ՀՀ մշտական ներկայացուցիչները խնդիրը մշտապես բարձրաձայնել են բոլոր հանդիպումներում, համաժողովներում և այլ միջոցառումներում:

Այսպիսով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հանդես են եկել մի շարք հայտարարություններով՝ ընդգծելով բոլոր գերիներին և պահվող անձանց ազատ արձակելու անհրաժեշտությունը: Բացի այդ, **ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերը** (Խոշտանգումների հարցով ՄԱԿ հատուկ զեկուցող, Բռնի անհետացման հարցերով ՄԱԿ աշխատանքային խմբի նախագահող, Արտադատական, արագացված մահապատիժների հարցերով հատուկ զեկուցողներ) հանդես են եկել **«Լեռնային Ղարաբաղ. բոլոր գերիները պետք է ազատ արձակվեն»** խորագրով հայտարարությամբ, որում հղում են կատարում **2020թ. նոյեմբերի 9-ի** եռակողմ հայտարարությանը:

ԵՄ շրջանակներում հայ գերիների վերադարձի անհրաժեշտության խնդիրը բարձրացվել է Եվրոպական հանձնաժողովի նախագահի, ԵՄ Արտաքին հարաբերությունների ծառայության խոսնակի, Եվրոպական խորհրդարանի 100-ից ավելի անդամների կողմից: Մի շարք պատգամավորներ իրենց երկրների հայտնի լրատվամիջոցներում հանդես են եկել նաև խնդրին առնչվող հոդվածներով:

Հայ գերիների վերադարձի հարցը բարձրացվել է նաև ԵԽ Նախարարների կոմիտեի և ԵԽԽՎ շրջանակներում: ԵԽԽՎ հունվարյան նստաշրջանի ընթացքում ռազմագերիների վերադարձի հարցը ներառվել է վեհաժողովի մոնիտորինգային գործընթացների վերաբերյալ բանաձևում՝ կոչ անելով «անհապաղ իրականացնել ռազմագերիների և մարմինների փոխանակումը» (ԵԽԽՎ բանաձև թիվ 2357 (2021): **ԵԽԽՎ Մոնիտորինգային կոմիտեն** հրապարակել է հայտարարություն, որտեղ, վկայակոչելով ՄԻԵԴ ձևակերպումներն Ադրբեջանի կողմից անօրինական կերպով պահվող 188 հայ ռազմագերիների վերաբերյալ, հորդորել է Ադրբեջանին վերադարձնել նրանց հայրենիք: **ԵԽԽՎ Միգրացիայի, փախստականների և տեղահանված անձանց հարցերով կոմիտեի «Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության հումանիտար հետևանքները/ԼՂ հակամարտություն» զեկույցում** անդրադարձ

է կատարվել հայ գերիների խնդրին, այդ թվում՝ նաև բռնի անհետացած անձանց դեպքերին (խոսքն այն հայ գերիների մասին է, որոնց գերեվարման վերաբերյալ առկա են ապացույցներ, սակայն Ադրբեջանը հերքում է նրանց գերեվարումը):

Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների, Ադրբեջանի կողմից իր պարտավորությունների չկատարման հարցերին տարբեր ձևաչափերում անդրադարձել են ԳԴՀ կառավարության Եվրոպական հարցերով պետնախարար Միխայել Ռոթը, Լյուքսեմբուրգի արտաքին գործերի նախարար Ժան Ասելբորնը, Բելգիայի փոխվարչապետ, ԱԳ նախարար Սոֆի Վիլմեսը և այլոք: **Ապրիլի 4-ին** Սուրբ Հարության տոնի առթիվ Հռոմի պապը Վատիկանի Ս. Պետրոս տաճարում հանդես է եկել ամենամյա ուղերձով, որի ընթացքում անդրադարձ է կատարել նաև հայ գերիների վերադարձի խնդրին: **Մայիսի 20-ին Եվրոպական խորհրդարանը 607** անդամների ձայնով ընդունել է հայ գերիների անհապաղ ազատման և վերադարձի կոչ անող բանաձև: Նիդերլանդների, Սլովակիայի, Իտալիայի, Բելգիայի, Լյուքսեմբուրգի խորհրդարանները ընդունել են համապատասխան բանաձևեր, որոնցով կոչ են արել անհապաղ վերադարձնել հայ ռազմագերիներին և քաղաքացիական անձանց: Հայ գերիների ազատ արձակման հարցն են պարբերաբար բարձրացրել ԱՄՆ Սենատի և Ներկայացուցիչների պալատի անդամները: **Human Rights Watch** իրավապաշտպան կազմակերպությունը Հայաստան և Լեռնային Ղարաբաղ կատարած այցի արդյունքում հրապարակել է զեկույց, որում տեղ են գտել հստակ ձևակերպումներ հայ գերիների խոշտանգումների վերաբերյալ՝ դրանք որակելով որպես պատերազմական հանցագործություն:

Միջազգային հանրության ճնշման ներքո, ինչպես և միջնորդների ջանքերի շնորհիվ ապահովվել է **84 հայ ռազմագերիների վերադարձը** հայրենիք:

2021 թվականին ձեռնարկված քայլերն ուղղված են եղել նաև Լեռնային Ղարաբաղի դեմ ագրեսիայի հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության պաշտպանությանը և այդ գործում ՅՈՒՆԵՍԿՕ-ի արդյունավետ ներգրավմանը: Ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր՝ միջազգային հանրության ուշադրությունը կատարվող հանցագործություններին սևեռելու, պատմամշակութային հուշարձանների, հնագիտական վայրերի և թանգարանային առարկաների դիտավորյալ ոչնչացման, դրանց վնասման, ինչպես նաև դրանք «աղվանական» ներկայացնելու միջոցով ինքնության աղավաղմանն ուղղված ադրբեջանական քաղաքականությունը դատապարտելու և կանխելու ուղղությամբ:

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը **նոյեմբերի 11-ին** մասնակցել է **ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր համաժողովի 41-րդ նստաշրջանի** շրջանակում կայացած Համընդհանուր քաղաքական հարցերով քննարկմանը: Ելույթում

անդրադարձ է կատարվել 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի և նրա ժողովրդի դեմ սանձազերծված ագրեսիայի ընթացքում Ադրբեջանի զինված ուժերի կողմից մշակութային հուշարձանների միտումնավոր թիրախավորմանը: Ընդգծվել է տարածաշրջան ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագիտական առաքելության արագ իրականացման անհրաժեշտությունը՝ Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954թ. կոնվենցիայի շրջանակներում:

Նոյեմբերի 11-ին ՀՀ ԱԳ նախարարը հանդիպել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Օդրի Ազուլեի հետ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Արցախի դեմ ագրեսիայի հետևանքով ադրբեջանական վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական պատմամշակութային և կրոնական ժառանգության պաշտպանության խնդրին: **Նոյեմբերի 12-ին** նախարար Միրզոյանը ներկա է գտնվել **ՅՈՒՆԵՍԿՕ-ի 75-ամյա** հոբելյանին նվիրված բարձրաստիճան միջոցառմանը, որին մասնակցում էին շուրջ 26 երկրների ղեկավարներ:

ՄԱԿ-ի Մշակութային հարցերով հատուկ զեկուցողի հաղորդագրությանն ի պատասխան՝ ներկայացվել է Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման և վնասման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն (**2021թ. նոյեմբեր**):

Դեկտեմբերի 17-ին ԱԳ նախարարի տեղակալը մասնակցել է և ելույթով հանդես եկել Հնագույն քաղաքակրթությունների ֆորումի 5-րդ նախարարական հանդիպմանը: Ներկայացվել է «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թվականի մայիսի 14-ի կոնվենցիայի և դրան կից երկու (1954 և 1999թթ.) արձանագրությունների դրույթների կատարման վերաբերյալ պարբերական ազգային զեկույցը 2017-2020թթ. շրջափուլի համար, որին կցվել է նաև կամավոր զեկույց՝ նվիրված Արցախի մշակութային ժառանգությանը:

Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի կողմից պարբերաբար պատրաստվել և կազմակերպության գլխավոր տնօրենին, ինչպես նաև անդամ երկրների ազգային հանձնաժողովներին են ներկայացվել պատերազմի ընթացքում և դրանից հետո հայկական մշակութային ժառանգության հուշարձանների միտումնավոր թիրախավորումն ու ռմբակոծումը հիմնավորող, ինչպես նաև հայկական քրիստոնեական հուշարձաններն աղվանական ներկայացնելու միջոցով դրանց ինքնության աղավաղմանն ուղղված ադրբեջանական հետևողական քաղաքականության մասին համապարփակ նյութեր և փաստեր:

Գործնական քայլեր են ձեռնարկվել՝ ապահովելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներգրավումը Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում

գտնվող Արցախի հայկական մշակութային ժառանգության պաշտպանությանը: Մասնավորապես, Հայաստանը կառուցողական կերպով ներգրավված է եղել Արցախ և հարակից շրջաններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստահավաք առաքելության հնարավորինս արագ գործուղման գործընթացում:

Շարունակական ակտիվ ջանքեր են գործադրվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կողմից ի սկզբանե հայտարարված և Զինված հակամարտությունների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954թ. Հաագայի կոնվենցիայի Երկրորդ արձանագրության միջկառավարական կոմիտեի հայտարարությամբ վերահաստատված ձևաչափով առաքելությունն իրականացնելու ուղղությամբ:

Ակտիվ համագործակցություն է ծավալվել նաև մշակութային արժեքների պաշտպանության հարցերով զբաղվող միջազգային այլ կառույցների և կազմակերպությունների հետ, այդ թվում՝ Համաշխարհային հուշարձանների հիմնադրամի, Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ), Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհրդի (ԻԿՕՄՕՍ), «Կապույտ վահան» միջազգային կազմակերպության, Հնագետների եվրոպական ասոցիացիայի, Հակամարտության գոտիներում ժառանգության պաշտպանության հարցերով միջազգային դաշինքի (ALIPH), Մշակութային արժեքների պահպանման և վերականգնման հարցերով միջազգային հետազոտական կենտրոնի (ԻԿԿՌՕՄ), Եվրոպա Նոստրա ՀԿ հետ: Վերջիններիս ուշադրությունը հրավիրվել է Արցախի հայկական պատմամշակութային հուշարձանների և հնագիտական վայրերի վտանգված լինելու խնդրին:

3. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում, մարդկության դեմ հանցանքների կանխարգելման օրակարգ

Ցեղասպանության կանխարգելման ՀՀ օրակարգի շրջանակներում **հունիսի 22-ին ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի 43-րդ նստաշրջանի** ընթացքում կոնսենսուսով ընդունվել է ՀՀ ներկայացրած «Ցեղասպանության կանխարգելում» խորագրով բանաձևը: Փաստաթուղթն արտացոլում է խնդրի վերաբերյալ ժամանակակից աշխարհում տեղի ունեցող զարգացումները և համահունչ է ՄԱԿ-ի կողմից նախանշված գերակայություններին, բարձրաձայնում է համամարդկային նշանակության խնդիրներ, այդ թվում՝ դատապարտում է կանանց և աղջիկների հանդեպ ցեղասպան գործողությունները, ընդգծում է ազգային, կրոնական և էթնիկ փոքրամասնությունների մշակութային և հոգևոր ժառանգության ու պատմական հուշարձանների պահպանման կարևորությունը:

Շարունակվել են աշխատանքներն Ընդդեմ ցեղասպանության հանցագործության չորրորդ գլոբալ ֆորումի կազմակերպման ուղղությամբ:

Ցեղասպանության կանխարգելման շրջանակներում շարունակվել է համագործակցությունը **«Զանգվածային ոճրագործությունների դեմ ուղղված գլոբալ գործունեության» (GAAMAC)** հետ:

2021թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչող հայտարարությամբ է հանդես ԱՄՆ նախագահ Ջոզեֆ Բայդենը**:** Լատվիայի խորհրդարանը **մայիսի 6-ին** պաշտոնապես ճանաչել և դատապարտել է Հայոց ցեղասպանությունը: **Փետրվարի 25-ին** Նիդերլանդների խորհրդարանը բանաձև է ընդունել՝ կոչ անելով կառավարությանը ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

4. Ռուսաստանի Դաշնություն

2021 թվականին ՀՀ-ՌԴ դաշնակցային հարաբերությունները շարունակել են ակտիվ զարգանալ բոլոր ուղղություններով: Երկկողմ հարաբերությունների, բարձրագույն և բարձր մակարդակով քաղաքական երկխոսության դինամիկայի վրա հաշվետու ժամանակաշրջանում մեծ ազդեցություն են ունեցել 2020 թվականի պատերազմից հետո Հարավային Կովկասի տարածաշրջանում նոր աշխարհաքաղաքական զարգացումները: Երկկողմ համագործակցության օրակարգը, բացի ռազմական, տնտեսական, մարդասիրական և այլ ոլորտներում ավանդական ակտիվ երկխոսությունից, հագեցած է եղել հետպատերազմյան իրողությունների, մասնավորապես՝ Մինսկի խմբի համանախագահության մանդատի ներքո ԼՂ կարգավորման, հայ ռազմագերիների և այլ պահվող անձանց վերադարձի, ԼՂ-ում մարդասիրական հարցերի կարգավորման, Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող տարածքներում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման, տարածաշրջանային տնտեսական և տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման հարցերով:

Շարունակվել է ՀՀ և ՌԴ միջև բարձր մակարդակով, ինչպես նաև իրավասու գերատեսչությունների միջև համագործակցությունը COVID-19 համաճարակի դեմ պայքարով պայմանավորված երկկողմ սահմանափակումների վերացման (կանոնավոր ավիաչվերթների վերականգնում, «Ճանապարհորդում եմ առանց COVID-19-ի» ծրագրի մեկնարկ), ՀՀ առողջապահական համակարգին ՌԴ կողմից օժանդակության ապահովման ուղղությամբ:

Հանդիպումներ և հեռախոսազրույցներ են տեղի ունեցել երկրի առաջնորդների, փոխվարչապետների և ԱԳ նախարարների մակարդակով:

Հունվարի 11-ին Մոսկվայում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության կետերի լիարժեք իրականացմանը վերաբերող հարցեր: Անդրադարձ է կատարվել Լեռնային

Ղարաբաղում ռուսական խաղաղապահ առաքելության արդյունավետ իրականացմանը, հրադադարի վերահսկման գործում համագործակցությանը, տարածաշրջանում տրանսպորտային ենթակառուցվածքների ապաշրջափակման հնարավորություններին վերաբերող հարցերի: Նույն օրը կայացած՝ Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի առաջնորդների եռակողմ հանդիպման արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն:

ՀՀ վարչապետի և ՌԴ նախագահի միջև հանդիպումներ են կայացել նաև **ապրիլի 7-ին, հուլիսի 7-ին, հոկտեմբերի 12-ին** Մոսկվայում և **նոյեմբերի 26-ին** Սոչիում: Նշյալ հանդիպումների օրակարգում ընդգրկված են եղել ՀՀ-ՌԴ դաշնակցային հարաբերությունների օրակարգին, ինտեգրացիոն միավորումներում հետագա փոխգործակցությանը, **2020թ. նոյեմբերի 9-ի** և **2021թ. հունվարի 11-ի** եռակողմ հայտարարությունների կատարմանը, տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակմանը և տարածաշրջանում կայունության ամրապնդմանն առնչվող հարցեր:

Երկու երկրների ղեկավարների միջև կայացել է շուրջ երկու տասնյակ հեռախոսազրույց: Ակտիվ երկխոսությունը շարունակվել է նաև արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների միջև: ՀՀ և ՌԴ ԱԳ նախարարների միջև տեղի են ունեցել մեկ տասնյակից ավելի հեռախոսազրույցներ, անցկացվել են մի շարք հանդիպումներ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով:

ՀՀ և ՌԴ ԱԳ նախարարները հանդիպել են **մայիսի 6-ին** Երևանում: ՌԴ ԱԳ նախարարի՝ Հայաստան աշխատանքային այցի շրջանակներում ստորագրվել է ՀՀ և ՌԴ միջև Կենսաբանական անվտանգության ապահովման հարցերով փոխըմբռնման հուշագիր:

ԱԳ նախարարները հանդիպել են նաև **օգոստոսի 31-ին** Արարատ Միրզոյանի՝ Մոսկվա աշխատանքային այցի շրջանակներում:

2021թ. ընթացքում անցկացվել են մի շարք խորհրդակցություններ ԱԳ նախարարների տեղակալների մասնակցությամբ:

Նոյեմբերի 9-ին ՌԴ ԱԳ նախարարությունը հանդես է եկել հայտարարությամբ ՀՀ, ՌԴ և ԱՀ ղեկավարների եռակողմ հայտարարության միամյակի կապակցությամբ:

Դեկտեմբերի 10-ին Մոսկվայում կայացել է ՀՀ ԱԳ նախարարի տեղակալի և ՌԴ ԱԳ նախարարի տեղակալի հանդիպումը: Նույն օրը կայացել է «3+3» տարածաշրջանային խորհրդակցական ձևաչափի առաջին նիստը Հայաստանի, Ռուսաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի ԱԳ նախարարների տեղակալների և Իրանի ԱԳՆ գլխավոր տնօրենի համանախագահությամբ:

Դրական տեղաշարժեր են գրանցվել առևտրատնտեսական հարաբերություններում: Երկկողմ առևտրաշրջանառության ցուցանիշներում արձանագրվել է աճ, սերտ փոխգործակցությունը շարունակվել է նաև միջկառավարական և միջգերատեսչական հարթակներում:

Մարտի 17-ին ՀՀ և ՌԴ փոխվարչապետները հանդիպել են Մոսկվայում և **ապրիլի 1-ին**՝ Երևանում: Հանդիպումների օրակարգում ընդգրկված են եղել Արցախի բնակիչներին ուղղված հումանիտար աջակցության, ինչպես նաև Հայաստանի և Ռուսաստանի միջև էներգետիկայի, տրանսպորտի, գյուղատնտեսության, ենթակառուցվածքների և առողջապահության ոլորտներում համագործակցության խորացմանն առնչվող հարցեր: Անդրադարձ է կատարվել նաև փոխվարչապետների համանախագահությամբ գործող եռակողմ աշխատանքային խմբի և փորձագիտական խմբերի աշխատանքներին:

Փետրվարի 1-ից գործարկվել է «Ճանապարհորդում եմ առանց COVID-19-ի» ծրագիրը, որը թույլ է տվել ՀՀ քաղաքացիներին ՊՇՌ թեստի բացասական արդյունքներ ունենալու պարագայում անարգել մուտք գործել ՌԴ տարածք օդային սահմանային անցակետերով:

Դեկտեմբերի 21-ից 22-ը ՀՀ փոխվարչապետի և ՌԴ կառավարության նախագահի տեղակալի համանախագահությամբ Երևանում կայացել է ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հոբելյանական 20-րդ նիստը: Հանձնաժողովի նիստի ընթացքում որոշում է կայացվել Հայ-ռուսաստանյան գործարար խորհրդի ստեղծման մասին, որի հիմնական նպատակն է նոր նախագծերի և գաղափարների գեներացումն ու ներդրումային համագործակցության խթանումը: Որոշվել է նաև ստեղծել ՀՀ էկոնոմիկայի և ՌԴ տնտեսական զարգացման նախարարություններին կից տնտեսական և ներդրումային փոխգործակցության հարցերով Հայ-ռուսաստանյան աշխատանքային խումբ:

5. Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Հաշվետու տարվա ընթացքում հայ-ամերիկյան հարաբերություններում նկատվել է զգալի առաջընթաց, ինչը պայմանավորված է եղել ամերիկյան նոր վարչակազմի քաղաքականությամբ և հայկական կողմի՝ ԱՄՆ հետ հարաբերությունները ավանդական և նոր ուղղություններով զարգացնելու պատրաստակամությամբ:

Հայաստանը բարձրագույն՝ ՀՀ վարչապետի մակարդակով մասնակցություն է ունեցել ԱՄՆ նախագահ Բայդենի վարչակազմի կողմից կազմակերպված մի շարք միջոցառումների: ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև կայացել են մի շարք երկկողմ բարձրաստիճան շփումներ և հանդիպումներ:

Փետրվարի 8-ին տեղի է ունեցել ԱԳ նախարար Արա Այվազյանի հեռախոսազրույցը ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի հետ: Հեռախոսազրույցի ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերություններն ու ԼՂ դեմ ադրբեջանական ագրեսիայի արդյունքում ստեղծված իրավիճակը:

Մարտի 3-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ: Զրույցի ընթացքում քննարկվել են հայ ռազմագերիների շուտափույթ վերադարձը, Հայաստանում տեղի ունեցող բարեփոխումները, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի համանախագահության հովանու ներքո Լեռնային Ղարաբաղի հակամարտության համապարփակ կարգավորման հեռանկարները:

Մայիսի 13-ին ԱԳ նախարար Արա Այվազյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի հետ: Զրույցի հիմնական թեման է եղել նախօրեին ադրբեջանական զորքերի կողմից ՀՀ ինքնիշխան տարածք ներթափանցումը:

Հունիսի 9-ից 11-ը տեղի է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի պաշտոնական այցը, որի ընթացքում կայացել են վերջինիս հանդիպումները ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ԱԳՆ պաշտոնյաների, ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանի հետ: **Հուլիսի 7-ին** ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ: Զրույցի ընթացքում ԱՄՆ պետքարտուղարը շնորհավորել է ՀՀ վարչապետին արտահերթ խորհրդարանական ընտրություններում տարած հաղթանակի կապակցությամբ: Քննարկվել են ՀՀ-ում իրականացվող բարեփոխումներին ԱՄՆ աջակցության, ռազմագերիների անհապաղ վերադարձի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման և ՀՀ ժողովրդավարական առաջընթացի վերաբերյալ հարցերը:

Հուլիսի 29-ին ԱԳ նախարարի պարտականությունները կատարող Արմեն Գրիգորյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի հետ: Զրույցի ընթացքում քննարկվել են նախօրեին ՀՀ Գեղարքունիքի մարզում հայկական մարտական դիրքերի ուղղությամբ Ադրբեջանի հարձակման, Ադրբեջանում ապօրինի կերպով պահվող հայ ռազմագերիների և նրանց նկատմամբ շինծու քրեական գործերի հարուցման հարցերը:

Սեպտեմբերի 24-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 76-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու նպատակով Նյու Յորքում գտնվող ԱԳ նախարար

Արարատ Միրզոյանը հանդիպել է ԱՄՆ պետքարտուղարի քաղաքական հարցերով տեղակալ Վիկտորիա Նուլանդի հետ: Հանդիպման ընթացքում հանգամանալից անդրադարձ է եղել Լեռնային Ղարաբաղի հակամարտության՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում կարգավորման հարցին, ինչպես նաև երկկողմ օրակարգին վերաբերող խնդիրների:

Հոկտեմբերի 21-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալ Քերըն Դոնֆրիդի հետ, որի ընթացքում քննարկվել է ռազմագերիների շուտափույթ վերադարձի և հակամարտության համապարփակ կարգավորման ուղղությամբ քայլերի անհրաժեշտությունը:

Նոյեմբերի 2-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է Հայաստանում պաշտոնական այցով գտնվող ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Էրիկա Օլսոնի գլխավորած պատվիրակությանը:

Նոյեմբերի 17-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց Է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական և եվրասիական հարցերով տեղակալ Քերըն Դոնֆրիդի հետ: Հեռախոսազրույցի ընթացքում քննարկվել են **նոյեմբերի 16-ին** Սյունիքի մարզի տարածքում ադրբեջանական զորքերի առաջխաղացման, Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները զսպելու և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջան այցելության հարցերը:

Դեկտեմբերի 2-ին ԵԱՀԿ նախարարական խորհրդի 28-րդ նիստին մասնակցելու նպատակով Ստոկհոլմում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում կարգավորման հեռանկարները:

Հայաստանի ինքնիշխան տարածք Ադրբեջանի ներխուժման արդյունքում **մայիսի 27-ին** ԱՄՆ մտահոգություն է հայտնել Հայաստանի և Ադրբեջանի սահմանին տեղի ունեցած բախումների կապակցությամբ, վերահաստատել իր կոչն ուղղված Ադրբեջանին՝ բոլոր ռազմագերիներին և պատանդներին ազատ արձակելու և զորքերը մինչև **մայիսի 11-ը** զբաղեցրած դիրքեր հետքաշելու վերաբերյալ:

Սեպտեմբերի 15-ին լրագրողների հետ կայացած ճեպազրույցի ընթացքում ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսին նշել է, որ ԼՂ կարգավիճակի հարցը լուծված չէ և այն գտնվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության օրակարգում:

Լոս Անջելեսի քաղաքային խորհրդի անդամ Փոլ Գրիգորյանի նախաձեռնությամբ **մարտի 13-ին** Լոս Անջելեսի քաղաքային խորհրդի կողմից

նոյեմբերի 9-ը հռչակվել է Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի ագրեսիայի հիշատակի և ոգեկոչման օր:

6. Եվրոպական միություն

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները Հայաստանի և Եվրոպական միության միջև գործընկերության ամրապնդման, ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախանշված բարեփոխումների իրականացման ուղղությամբ ԵՄ հետ համագործակցության կյանքի կոչման, առանձին ոլորտներում համագործակցության ընդլայնման, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգային հարցերի շուրջ Հայաստանի դիրքորոշման ներկայացման, ԼՂ հակամարտության ու Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիայի վերաբերյալ համարժեք արձագանքներ ստանալու և մի շարք այլ ուղղություններով:

Մարտի 1-ին ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրն ամբողջապես ուժի մեջ է մտել: **Հունիսի 1-ին** ուժի մեջ է մտել ՀՀ վարչապետի N 587-Լ որոշումը, որով հաստատվել է ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ՝ 2018 թվականից ուժի մեջ չմտած դրույթների կիրարկման ճանապարհային քարտեզը:

Մարտի 25-ին առցանց ձևաչափով կայացել է ՀՀ-ԵՄ առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի երրորդ նիստը:

Կայացել են նաև ՀՀ-ԵՄ Մուտքի արտոնագրերի դյուրացման հարցերով համատեղ կոմիտեի 6-րդ նիստը **ապրիլի 28-ին**՝ առցանց ձևաչափով և ՀՀ-ԵՄ Հետընդունման հարցերով համատեղ կոմիտեի 7-րդ նիստը՝ **հունիսի 29–ին**՝ ևս առցանց ձևաչափով:

Մարտի 25-ին՝ անցանց ձևաչափով տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ մարդու իրավունքների շուրջ երկխոսության 11-րդ նիստը:

Սեպտեմբերի 16-ին ստորագրվել է համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության իրավապահ գործակալության («Եվրապոլ») միջև՝ անդրսահմանային կազմակերպված հանցավորության դեմ պայքարում համագործակցության նպատակով:

Նոյեմբերի 12-ին ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը:

Նոյեմբերի 15-ին ստորագրվել է ՀՀ-ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտու շուրջ համաձայնագիրը:

Հունիսի 2-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Բրյուսել, որտեղ հանդիպում է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

Հուլիսի 16-ից 17-ը Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելն այցելել է Հայաստան (տարածաշրջանային այցելության շրջանակներում):

Դեկտեմբերի 15-ին ԵՄ և **ԱլԳ** երկրների ղեկավարների գագաթաժողովի շրջանակներում տեղի է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի նախաձեռնությամբ եռակողմ հանդիպում՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ: **Դեկտեմբերի 19-ին** Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը, այցելելով Հայաստան, Շառլ Միշելի միջնորդությամբ հայրենադարձրել է 10 հայ ռազմագերի:

Հաշվետու տարվա ընթացքում մի քանի անգամ Հայաստան է այցելել Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը:

Մարտի 2-ին՝ ՀԸԳՀ ուժի մեջ մտնելու կապակցությամբ, ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանը հեռախոսազրույց է ունեցել ԵՀ փոխնախագահ, ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բոռելի հետ:

Ապրիլի 29-ին առցանց ձևաչափով կայացել է Վիշեգրադյան քառյակի և ԱլԳ երկրների ԱԳ նախարարների հանդիպումը:

Հունիսի 10-ին տեղի է ունեցել ԱլԳ՝ շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության հարցերով նախարարական 3-րդ հանդիպումը:

Հունիսի 25-ին ԵՄ բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բոռելի պատվիրակմամբ Հայաստան են այցելել Լիտվայի արտաքին գործերի նախարար Գաբրիելիուս Լանդսբերգիսը, Ավստրիայի՝ եվրոպական և միջազգային հարցերով դաշնային նախարար Ալեքսանդր Շալլենբերգը և Ռումինիայի արտաքին գործերի նախարար Բոգդան Աուրեսկուն:

Հուլիսի 8-ից 9-ը Հայաստան է այցելել ԵՀ հարևանության և ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվեր Վարհեյին. տարածաշրջանային այցի նպատակն էր ներկայացնել «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում. Արևելյան գործընկերության (ԱլԳ) առաջնահերթությունները 2020 թվականից հետո» խորագրով համատեղ աշխատանքային փաստաթուղթը և նրանից բխող տնտեսական և ներդրումային ծրագիրը, ինչպես նաև ԱլԳ յուրաքանչյուր անդամ երկրի համար նախատեսված հինգ ուղենշային նախաձեռնությունները:

Սեպտեմբերի 24-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 76-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ԵՀ

փոխնախագահ, ԵՄ Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բոռելի հետ:

Նոյեմբերի 16-ին ԵՄ ԱԼԳ նախարարական հանդիպման շրջանակներում Բրյուսելում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԵՀ հարևանության և ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվեր Վարհեյի հանդիպումը:

Ընդհանուր առմամբ, Եվրոպական հանձնաժողովի միջոցով համակարգվել է ԵՄ մի շարք անդամ պետությունների կողմից Հայաստանին նվիրաբերվող պատվաստանյութերի (ընդհանուր՝ շուրջ 910 հազար չափաբաժին) տրամադրումը:

Հոկտեմբերի 28-ին Եվրոպական հանձնաժողովը հաստատվել է Հայաստանի կողմից տրամադրվող «COVID-19» համավարակի դեմ պատվաստման հավաստագրերի համարժեքությունը ԵՄ կողմից տրամադրվող «EU Digital COVID» հավաստագրին: Այսպիսով, Հայաստանը միացել է Եվրոպական միության վերոնշյալ համակարգին:

Դեկտեմբերի 15-ին տեղի է ունեցել ԵՄ ԱԼԳ գագաթնաժողովը, որին մասնակցել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած պատվիրակությունը: Գագաթնաժողովի արդյունքներով ընդունվել է համատեղ հռչակագիր: Այցելության ընթացքում կայացել է ՀՀ վարչապետ Նիլոլ Փաշինյանը հանդիպումը Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի և ԵՄ խորհրդում նախագահող Սլովենիայի վարչապետ Յանեշ Յանշայի հետ: Տեղի է ունեցել առաջին եռակողմ հանդիպումը Եվրոպական խորհրդի նախագահի, ՀՀ և Ադրբեջանի ղեկավարների միջև:

Աշխատանքներ են տարվել նաև **Եվրոպական խորհրդարանում**: **Հունվարի 20-ին** Եվրոպական խորհրդարանում ընդունվել են «Ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականություն» (CFSP) և «Ընդհանուր անվտանգային ու պաշտպանական քաղաքականություն (CSDP)» տարեկան զեկույց-բանաձևերը: Նշված փաստաթղթերում անդրադարձ է կատարվել ԼՂ հակամարտության՝ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում կարգավորմանը, հակամարտությունում Թուրքիայի ապակայունացնող դերակատարությանը, ռազմագերիների փոխանակմանը և ԼՂ-ում գտնվող հայկական մշակութային արժեքների պաշտպանությանը:

Հունվարի 27-ին Եվրոպական խորհրդարանի անվտանգային ու պաշտպանական հարցերով ենթակոմիտեի և մշակույթի ու կրթության հարցերով կոմիտեի համատեղ նիստում տեղի է ունեցել «The protection of cultural heritage in armed conflict: a role for CSDP missions and operations» վերտառությամբ քննարկում, իսկ **ապրիլի 13-ին** Եվրոպական խորհրդարանում Հայաստանի հետ բարեկամության խմբի նախագահ Լուկաս Ֆուռլասը (ԵԺԿ, Կիպրոս)

կազմակերպել է բաց առցանց կոնֆերանս՝ գումար «The fate of the Armenian captives in Azerbaijan» խորագրով:

Մայիսի 19-ին Եվրոպական խորհրդարանի լիագումար նստաշրջանի ընթացքում ընդունվել է Թուրքիայի վերաբերյալ բանաձև-զեկույցը, որում վերահաստատվել է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչը: Թուրքիային նաև կոչ է արվել զերծ մնալ ցանկացած տեսակի հակահայկական քարոզչությունից ու ատելության խոսքից և լիարժեքորեն հարգել հայկական մշակույթը պաշտպանելու հանձնառությունը: Զեկույցում մի քանի անդրադարձ է արվում նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում Թուրքիայի ունեցած բացասական դերին:

Մայիսի 20-ին Եվրոպական խորհրդարանում ընդունվել է **«Ռազմագերիները Հայաստանի և Ադրբեջանի միջև վերջին հակամարտությունից հետո» խորագրով բանաձև**, որով խորհրդարանը պահանջել է անհապաղ ու անվերապահորեն ազատ արձակել հակամարտության ընթացքում և դրանից հետո պահվող բոլոր հայ գերիներին՝ ռազմագերիներին ու քաղաքացիական անձանց:

Հուլիսի 30-ին և նոյեմբերի 17-ին Մարինա Կալյուրանդը, Անդրեյ Կովաչևը և Ադրբեջանի հարցերով զեկուցող Ժելյանա Զովկոն (ԵԺԿ, Խորվաթիա) հանդես են եկել համատեղ հայտարարություններով՝ ԼՂ հակամարտության, Հայաստանի սահմանի նկատմամբ Ադրբեջանի ռազմական գործողության, 2021թ. մայիսից ՀՀ տարածք ադրբեջանական ԶՈՒ ներխուժման վերաբերյալ:

Ապրիլի 19-ից 20-ը տեղի է ունեցել «Եվրանեսթ» ԽՎ 9-րդ լիագումար նստաշրջանը, որի ընթացքում ելույթով է հանդես եկել ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը:

7. Հարևան երկրներ

2021թ. ընթացքում անհրաժեշտ ջանքեր են գործադրվել Վրաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության հետ առանձնահատուկ հարաբերությունների զարգացման և փոխգործակցության խորացումն ապահովելու ուղղությամբ:

7.1 Վրաստան

Հունվարի 22-ին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարարի աշխատանքային այցը Վրաստան (Ծինանդալ), որի ընթացքում կայացած առանձնազրույցի ընթացքում երկու երկրների ԱԳ նախարարները քննարկել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ, ինչպես նաև հստակեցրել Հայաստանի և Վրաստանի դիրքորոշումները տարածաշրջանում ստեղծված նոր իրողությունների առնչությամբ:

Մարտի 15-ին Երևանում քաղաքական խորհրդակցություններ են անցկացվել Հայաստանի և Վրաստանի ԱԳ նախարարությունների միջև, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել երկկողմ օրակարգում առկա բոլոր հարցերին, մանրամասն քննարկվել են տարածաշրջանում տնտեսական կապերի և ենթակառուցվածքների ապաշրջափակման հնարավորություններն ու հեռանկարները:

Ապրիլի 15-ից 16-ը տեղի է ունեցել ՀՀ նախագահի պաշտոնական այցը Վրաստան, որի շրջանակներում հանդիպումներ են կայացել Վրաստանի նախագահի, խորհրդարանի նախագահի և Համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարքի հետ:

Մայիսի 12-ին տեղի է ունեցել Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի պաշտոնական այցը Հայաստան: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպմանը քննարկվել են տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, առկա մարտահրավերներն ու համագործակցության նոր հնարավորությունները: Այցի շրջանակներում առանձին հանդիպում է տեղի ունեցել նաև Հայաստանի և Վրաստանի ԱԳ նախարարների միջև:

Հուլիսի 9-ին Բագրատաշեն-Սադախլո սահմանային անցակետում տրվել է հայ-վրացական «Բարեկամություն» նոր կամրջի շինարարության մեկնարկը, որին մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը և Վրաստանի տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարը:

Սեպտեմբերի 8-ից 9-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցը Վրաստան: Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի հետ հանդիպմանը քննարկվել են երկկողմ և տարածաշրջանային համագործակցության ընդլայնման, այդ թվում՝ ենթակառուցվածքների ոլորտում հնարավորությունները: Այցի շրջանակներում առանձին հանդիպում է տեղի ունեցել նաև Հայաստանի և Վրաստանի ԱԳ նախարարների միջև:

Հոկտեմբերի 9-ին տեղի է ունեցել Վրաստանի վարչապետի աշխատանքային այցը Հայաստան, որի ընթացքում առանձնազրույց է կայացել ՀՀ վարչապետի հետ:

Դեկտեմբերի 20-ից 21-ը գումարվել է Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 11-րդ նիստը՝ երկու երկրների վարչապետների նախագահությամբ: Այցի ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետը նաև առանձնազրույց է ունեցել Վրաստանի Հանրապետության իր գործընկերոջ հետ:

Հաշվետու տարվա ընթացքում կայացել են Հայաստանի և Վրաստանի տարբեր գերատեսչությունների բարձրաստիճան ղեկավարության մի շարք

փոխայցելություններ: Երկու երկրների միջև մշտական աշխատանքային կապ է հաստատվել նաև COVID-19 համավարակի դեմ պայքարի շրջանակներում:

7.2 Իրանի Իսլամական Հանրապետություն

Հունվարի 26-ից 27-ը տարածաշրջանային այցի շրջանակներում աշխատանքային այցով Հայաստանում է գտնվել ԻԻՀ արտաքին գործերի նախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆը: Իրանի արտգործնախարարը հանդիպումներ է ունեցել ՀՀ վարչապետի և ԱԳ նախարարի հետ: Քննարկվել են 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակը և զարգացումները, կարևորվել է տարածաշրջանային անվտանգության և կայունության ապահովումն ու այդ ուղղությամբ Իրանի հետ փոխգործակցությունը: Քննարկվել են նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում փոխշահավետ համագործակցության առավել ամրապնդմանը և ընդլայնմանը վերաբերող հարցեր:

Մայիսի 26-ին Հայաստան է ժամանել ԻԻՀ արտաքին գործերի նախարար Ջավադ Զարիֆը: Վերջինս հանդիպումներ է ունեցել ՀՀ վարչապետի և ԱԳ նախարարի հետ: Քննարկվել են հայ-ադրբեջանական սահմանին ստեղծված իրավիճակի հանգուցալուծմանն ուղղված քայլերը: Իրանի ԱԳ նախարարը շեշտել է իր երկրի շահագրգռվածությունը՝ տարածաշրջանի կայունության ապահովման, Հայաստանի տարածքային ամբողջականության լիարժեք պահպանման ու ապահովման հարցերում:

Օգոստոսի 5-ին ԻԻՀ նորընտիր նախագահ Էբրահիմ Ռայիսիի երդմնակալության արարողությանը մասնակցելու նպատակով աշխատանքային այցով ԻԻՀ է այցելել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Վերջինս առանձնազրույց է ունեցել ԻԻՀ նախագահի հետ, այնուհետև Իսլամական խորհրդի մեջլիսում մասնակցել է ԻԻՀ նախագահի երդմնակալության արարողությանը: Իրանի նախագահը հանդիպմանը նշել է, որ Իրանը կարևորում է բարեկամ Հայաստանի հետ քաղաքական, տնտեսական և հումանիտար ոլորտներում հարաբերությունների շարունակական զարգացումը:

Սեպտեմբերի 1-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հեռախոսազրույցը ԻԻՀ ԱԳ նորանշանակ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հետ: Մտքեր են փոխանակվել տարածաշրջանային և միջազգային անվտանգության հարցերի շուրջ: Քննարկվել են տնտեսական ոլորտում փոխգործակցության ընդլայնման հնարավորությունները, որում առանձնահատուկ կարևորվել է միջկառավարական հանձնաժողովի դերը: Անդրադարձ է կատարվել նաև Պարսից ծոց-Սև ծով միջազգային տրանսպորտային միջանցք ստեղծելու մասին բազմակողմ համաձայնագրի ստորագրմանը:

Սեպտեմբերի 17-ին աշխատանքային այցով Դուշանբեում գտնվող ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպել է ԻԻՀ նախագահ Էբրահիմ Ռայիսիին: Քննարկվել են հայ-իրանական հարաբերությունների հետագա զարգացմանը, երկու երկրների միջև բեռնափոխադրումների անխափան կազմակերպմանը, տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին վերաբերող հարցեր:

Հոկտեմբերի 4-ից 5-ը ԻԻՀ ԱԳ նախարարի հրավերով Իրան է այցելել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպմանը հանգամանորեն քննարկվել է երկկողմ և բազմակողմ ձևաչափերում երկու երկրների միջև համագործակցությանը, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումներին առնչվող հարցերի լայն շրջանակ:

7.3 Թուրքիայի Հանրապետություն

Հայկական կողմը մշտապես բարձրաձայնել է Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորման պատրաստակամության մասին: Այդ նպատակով ՌԴ և այլ միջազգային գործընկերների հետ քննարկումների ընթացքում հայկական կողմը տեղեկացրել էր, որ պատրաստ է Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանն՝ առանց նախապայմանների, ինչին հաջորդել էին երկխոսության համար հատուկ ներկայացուցիչներ նշանակելու վերաբերյալ Հայաստանի և Թուրքիայի հայտարարությունները: Հայաստանի կողմից հատուկ ներկայացուցիչ է նշանակվել ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանը, Թուրքիայի կողմից՝ դեսպան Սերդար Քըլըչը:

Դեկտեմբերի 10-ին Մոսկվայում տեղի է ունեցել **«3+3» տարածաշրջանային խորհրդակցական հարթակի** ձևավորմանն ուղղված առաջին հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են տարածաշրջանային հնարավոր համագործակցության շրջանակները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հարթակի աշխատանքը կենտրոնացնել գործնական այն հարցերի շուրջ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում բոլոր մասնակիցների համար: Դրանց թվում են վստահության բարձրացման միջոցները, փոխգործակցությունը առևտրատնտեսական, տրանսպորտային և մշակութային-մարդասիրական ոլորտներում, հակազդեցությունն ընդհանուր մարտահրավերներին և սպառնալիքներին:

8. Եվրասիական տարածաշրջանի երկրներ

Սեպտեմբերի 30-ին Բելառուսի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ռազմիկ

Խումարյանն իր հավատարմագրերն է հանձնել Բելառուսի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյին:

Հոկտեմբերի 8-ին Մինսկում անցկացվել են երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև խորհրդատվություններ՝ փոխնախարարներ գլխավորությամբ: Ստորագրվել են Քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին միջկառավարական համաձայնագրում լրացում կատարելու մասին արձանագրությունը, ինչպես նաև՝ հետընդունման (ռեադմիսիայի) մասին միջկառավարական համաձայնագիրը:

Հոկտեմբերի 15-ին ԱՊՀ ԱԳ նախարարների խորհրդի նիստին մասնակցելու նպատակով Մինսկում գտնվող Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Բելառուսի ԱԳ նախարար Վլադիմիր Մակեյի հետ:

Նոյեմբերի 26-ին Մինսկում կայացել է Առևտրատնտեսական համագործակցության հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հերթական՝ 15-րդ նիստը:

Օգոստոսի 19-ին Ուկրաինայում ՀՀ նորանշանակ դեսպան Վլադիմիր Կարապետյանն իր հավատարմագրերն է հանձնել Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկուն:

Հոկտեմբերի 30-ին ՀՀ Ազգային ժողովում ձևավորվել է Հայաստան-Ուկրաինա բարեկամական խումբը:

Ապրիլի 21-ին կայացել է Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարարի տեղակալի հեռախոսազրույցը **Մոլդովայի Հանրապետության** ԱԳ և եվրոպական ինտեգրման նախարարության պետքարտուղարի հետ: Աշխատանքներ են տարվել ԱԳ նախարարությունների միջև քաղաքական խորհրդատվություններ անցկացնելու ուղղությամբ:

Դեկտեմբերի 15-ին Բրյուսելում Արևելյան գործընկերության գագաթնաժողովի շրջանակում կայացել է Հայաստանի Հանրապետության վարչապետի հանդիպումը Մոլդովայի Հանրապետության նախագահի հետ:

Ապրիլի 20-ին Հայաստանի և **Ղազախստանի** ԱԳ նախարարների տեղակալների միջև կայացել են քաղաքական խորհրդատվություններ՝ տեսակապի ձևաչափով, որի արդյունքներով կողմերի միջև ստորագրվել է ՀՀ և ՂՀ ԱԳ նախարարությունների միջև փոխնախարարների մակարդակով քաղաքական խորհրդատվությունների արձանագրությունը:

Մայիսի 26-ին Նուր-Սուլթանում կայացել է Տնտեսական համագործակցության հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողովի 8-րդ նիստը:

Հունիսի 3-ին կայացել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի աշխատանքային այցը Ղազախստան: Այցի ընթացքում կայացել են ՀՀ նախագահի հանդիպումները Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաևի, Ղազախստանի առաջին նախագահ Նուրսուլթան Նազարբաևի, ինչպես նաև Ղազախստանի խորհրդարանի ղեկավարության հետ:

Դեկտեմբերի 2-ին ԵԱՀԿ նախարարական 28-րդ համաժողովի շրջանակներում, Ստոկհոլմում կայացել է ՀՀ ԱԳ նախարարի հանդիպումը ՂՀ ԱԳ նախարարի հետ: Հանդիպման ընթացքում Հայաստանի և Ղազախստանի ԱԳ նախարարները ստորագրել են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Ղազախստանի արտաքին գործերի նախարարության միջև 2022-2023թթ. համագործակցության միջոցառումների ծրագիրը:

Ապրիլի 2-ին Մոսկվայում, ԱՊՀ ԱԳ նախարարների խորհրդի նիստի շրջանակներում, կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանի հանդիպումը **Ղրղզստանի** ԱԳ նախարար Ռուսլան Կազակբաևի հետ:

Օգոստոսի 19-ին Իսիկ Կուլի շրջանի Չոլպոն-Ատա քաղաքում՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստի շրջանակներում, կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Ղրղզստանի նախագահ Սադիր Ժապարովի հետ:

Նոյեմբերի 18-ին Երևանում՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակներում, կայացել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Ղրղզստանի վարչապետ Ակիլբեկ Ժապարովի հետ:

Դեկտեմբերի 2-ին ԵԱՀԿ ԱԳ նախարարական համաժողովին մասնակցելու նպատակով Ստոկհոլմում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Ղրղզստանի ԱԳ նախարար Ռուսլան Կազակբաևի հետ: Ստորագրվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Ղրղզական Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջև 2022-2024թթ. համագործակցության ծրագիրը:

Ապրիլի 3-ին Մոսկվայում՝ ԱՊՀ ԱԳ նախարարների խորհրդի նիստի շրջանակներում, կայացել է Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արա Այվազյանի հանդիպումը **Տաջիկստանի Հանրապետության** ԱԳ նախարար Սիրոջիդին Մուխրիդդինի հետ: Ստորագրվել է երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև խորհրդատվությունների երկամյա ծրագիրը:

Մայիսի 14-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնակատար Արա Այվազյանի հեռախոսազրույցը ՀԱՊԿ ԱԳ նախարարների խորհրդի նախագահ, Տաջիկստանի Հանրապետության ԱԳ նախարարի հետ:

Սեպտեմբերի 16-ին աշխատանքային այցով Դուշանբեում գտնվող Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՀԱՊԿ հավաքական խորհրդի նիստից առաջ հանդիպել է Տաջիկստանի Հանրապետության նախագահ Էմոմալի Ռահմոնի հետ:

Ապրիլի 1-ին Մոսկվայում՝ ԱՊՀ ԱԳ նախարարների խորհրդի նիստի շրջանակներում, ՀՀ ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել **Թուրքմենստանի** փոխվարչապետ, ԱԳ նախարար Ռաշիդ Մերեդովի հետ:

Հոկտեմբերի 14-ին Թուրքմենստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Խարազյանն իր հավատարմագրերի պատճենն է հանձնել Թուրքմենստանի փոխվարչապետ, ԱԳ նախարար Ռաշիդ Մերեդովին:

9. Եվրոպական երկրներ

2021 թվականի ընթացքում ակտիվորեն շարունակվել են հայ-ֆրանսիական առանձնաշնորհյալ հարաբերությունների և ընդգրկուն օրակարգի խորացմանն ու ամրապնդմանն ուղղված աշխատանքները բոլոր ոլորտներում:

Նոյեմբերին 10-ին Փարիզում **Ֆրանսիայի** ԱԳ նախարար Ժան-Իվ Լը Դրիանի հյուրընկալությամբ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ և մասնակցությամբ տեղի է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումը:

Դեկտեմբերին 16-ին Բրյուսելում ֆրանսիական կողմի նախաձեռնությամբ տեղի է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի եռակողմ հանդիպումը: Հանդիպումից հետո նախագահ Մակրոնը թվիթերյան հարթակում հայ ժողովրդին սատարող հաղորդագրություն է արել:

Արցախ են այցելել ԵՄ խորհրդարանի ֆրանսիացի պատգամավոր, եվրոպական հարցերով նախկին նախարար Նատալի Լուազոն (հուլիս), Իլ-դը-Ֆրանս շրջանային խորհրդի նախագահ Վալերի Պեկրեսը (դեկտեմբեր) և երկու տասնյակից ավելի ֆրանսիացի խորհրդարանականներ ու քաղաքապետեր:

Տարվա ընթացքում պարբերական բնույթ են կրել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, ինչպես նաև երկու երկրների ԱԳ նախարարների միջև հեռախոսազանգերը:

Ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության ոգեկոչման արարողությանը մասնակցելու կապակցությամբ Հայաստան է այցելել Ֆրանսիայի Սենատի նախագահ Ժերար Լարշեի գլխավորած պատվիրակությունը, ԱԳՆ պետքարտուղար Ժան-Պատիստ Լըմուանը, ով ներկայացնում էր նախագահ Մակրոնին, ինչպես նաև ԱԺ պատվիրակությունը, ովքեր, ի լրումն ապրիլի 24-ին

նախատեսված պաշտոնական արարողակարգային միջոցառումների, ունեցել են հանդիպումներ ՀՀ բարձրաստիճան ղեկավարության հետ:

Մայիսի 12-ին Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում ՀՀ տարածք ադրբեջանական զորքերի ներթափանցման արդյունքում՝ **մայիսի 13-ին** տեղի է ունեցել վարչապետ Փաշինյանի և նախագահ Մակրոնի հեռախոսազրույցը, որի արդյունքներով Ելիսեյան պալատը հրապարակել է մամուլի հաղորդագրություն՝ ընդգծելով նախագահի խոսքերը՝ «Հայաստանի տարածքից ադրբեջանական զորքերի անհապաղ դուրսբերման անհրաժեշտության» մասին: Ավելի ուշ Մակրոնը հայալեզու գրառում է կատարել «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում հետևյալ բովանդակությամբ՝ «Ադրբեջանի զինված ուժերը ներխուժել են Հայաստանի տարածք: Նրանք պետք է անհապաղ հետ քաշվեն: Եվս մեկ անգամ ասում եմ հայ ժողովրդին՝ Ֆրանսիան համերաշխ է ու այդպիսին էլ կմնա»: Նախագահը նույնաբովանդակ հրապարակում է կատարել նաև «Թվիթեր» սոցիալական ցանցում՝ ֆրանսերեն և անգլերեն լեզուներով: **Մայիսի 27-ին** Ֆրանսիայի ԱԳՆ հանդես է եկել հայտարարությամբ:

Հունիսի 1-ից 2-ը կայացել է ՀՀ վարչապետի այցը Ֆրանսիա, որի ընթացքում տեղի են ունեցել ՀՀ վարչապետի հանդիպումները Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Սենատի նախագահ Ժերար Լարշեի, Ազգային ժողովի նախագահ Ռիշար Ֆերանի, Փարիզի քաղաքապետ Անն Հիդալգոյի հետ:

Նոյեմբերի 16-ի դեպքերի կապակցությամբ Ֆրանսիայի ԱԳ նախարարությունը հանդես է եկել հայտարարությամբ:

Օգոստոսին ՀՀ-ում նշանակվել է Ֆրանսիայի նոր դեսպան, ով **սեպտեմբերի 29-ին** հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահին:

Այդ կապակցությամբ **հունվարի 27-ից 28-ը** Հայաստան է այցելել Ֆրանսիայի ԱԳՆ պետքարտուղար Ժան-Բատիստ Լըմուանն ու ԶՖԳ փոխտնօրենը: ՀՀ վարչապետի **փետրվարի 23-ի** N 154-Ա որոշմամբ ձևավորվել է հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության օրակարգին առնչվող հարցերը ֆրանսիական կողմի հետ քննարկելու ու դրանց ուղղությամբ իրականացվող աշխատանքները համակարգելու նպատակով աշխատանքային խումբ՝ ԱԳ նախարարի տեղակալի ղեկավարությամբ:

Դեկտեմբերի 9-ին Փարիզում տեղի է ունեցել Հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության աշխատանքային խմբի առաջին համատեղ նիստը: Միջոցառմանը ՀՀ համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հայկական պատվիրակությունը գլխավորում էր ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, ֆրանսիականը՝ Ֆրանսիայի արտաքին գործերի լիազոր նախարար Ժան-Բատիստ Լըմուանը: Նիստի ընթացքում ստորագրվել է Հայ-ֆրանսիական տնտեսական

համագործակցության 2021-2026թթ. ճանապարհային քարտեզը, որը սահմանում է ենթակառուցվածքների, քաղաքաշինության, էներգետիկայի, գյուղատնտեսության, զբոսաշրջության, առողջապահության, բարձր տեխնոլոգիաների ոլորտներում:

Դեկտեմբերին հայկական կողմը վավերացրել է Հայաստանի և Ֆրանսիայի կառավարությունների միջև Հայաստանում ԶՖԳ և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին համաձայնագիրը, որով ավարտվել է ՀՀ օրենսդրությամբ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ընթացակարգերը: Ֆրանսիական կողմը ավարտել էր համապատասխան ներքին ընթացակարգը 2018թ.:

Հոկտեմբերին, Ֆրանսիայում ՀՀ դեսպանության և Փարիզի քաղաքապետարանի միջև տևական բանակցությունների և մի քանի տարի տևած աշխատանքի արդյունքում, Փարիզի քաղաքային խորհուրդը միաձայն ընդունել է Փարիզի կենտրոնական հատվածներից մեկը՝ Հայաստանի անունով անվանակոչելու վերաբերյալ որոշումը: Տարածքը ստացավ Հայաստանի **էսպլանադ** անվանումը, որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ դեկտեմբերին. հայկական կողմը ներկայացնում էր ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

Արցախի դեմ պատերազմի ընթացքում և հետպատերազմյան շրջանում Փարիզի հիվանդանոցների տնօրինությունը, ինչպես նաև Լիոնի քաղաքային հիվանդանոցը միասին 7 բժշկական առաքելություն են գործուղել Հայաստան:

Փետրվարի 18-ին ՀՀ և **ԳԴՀ** ԱԳ նախարարությունների միջև տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ:

Ապրիլի 3-ին տեղի է ունեցել հեռախոսազրույց ՀՀ և ԳԴՀ ԱԳ նախարարների միջև:

Սեպտեմբերի 8-ից 10-ը Բեռլինում՝ ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարարությունում տեղի է ունեցել ՀՀ-ԳԴՀ միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը:

Դեկտեմբերի 13-ից 15-ը տեղի է ունեցել ԳԴՀ ԱԳՆ Արևելյան Եվրոպայի, ՌԴ, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների հարցերով քաղաքական տնօրեն Մաթիաս Լյութենբերգի այցը Հայաստան:

Հունվարին «Բեռլինյան շարք» միջոցառումների շրջանակներում տեղի է ունեցել **«Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը և Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը»** խորագրով առցանց սեմինար:

Մարտին Գերմանիայի Բունդեսթագում կազմակերպվել է առցանց հատուկ քննարկում Ադրբեջանում գտնվող հայ ռազմագերիների վերաբերյալ:

Մարտի 12-ին և մայիսի 25-ին տեղի են ունեցել հեռախոսազրույցներ Հայաստանի և **Ավստրիայի** ԱԳ նախարարների միջև:

Սեպտեմբերի 22-ին Նյու Յորքում՝ ՄԱԿ ԳԱ 76-րդ նստաշրջանի և դեկտեմբերի 2-ին Շվեդիայում՝ ԵԱՀԿ ԱԳ նախարարական համաժողովի շրջանակներում կայացել են Հայաստանի և Ավստրիայի ԱԳ նախարարների հանդիպումները:

Մարտի 19-ին Հայաստանի և Ավստրիայի խորհրդարանների բարեկամական խմբերի միջև տեսակապի միջոցով տեղի է ունեցել հանդիպում-խորհրդակցություն:

Հունիսի 25-ից 26-ը տեղի է ունեցել Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով ԵՄ բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի անունից Ավստրիայի Եվրոպական և միջազգային հարցերի դաշնային նախարար Ալեքսանդր Շալլենբերգի, Լիտվայի ԱԳ նախարար Գաբրիելիուս Լանդսբերգիսի և Ռումինիայի ԱԳ նախարար Բոգդան Աուրեսկուի բարձրաստիճան այցը Ադրբեջան, Հայաստան, Վրաստան:

Սեպտեմբերի 6-ից 9-ը տեղի է ունեցել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այցը Վիեննա, որտեղ մասնակցել է Խորհրդարանների նախագահների 5-րդ համաշխարհային համաժողովի երկրորդ փուլի հանդիպմանը և Ահաբեկչության դեմ պայքարի առաջին գլոբալ խորհրդարանական գագաթաժողովին:

2021թ. Երևանում Ավստրիական զարգացման գործակալության Զարգացման համագործակցության գրասենյակը ստացել է լիարժեք Զարգացման համակարգման գրասենյակի կարգավիճակ:

Հուլիսի 2-ին ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը ԵՄ շրջանակներում Բրյուսել կատարած աշխատանքային այցի շրջանակներում հանդիպել է **Բելգիայի Թագավորության** վարչապետ Ալեքսանդր դե Կրոյի հետ:

Հունվարի 26-ին Ֆլանդրիայի խորհրդարանում տեղի են ունեցել լսումներ՝ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի առնչությամբ:

Մայիսի 27-ին Ներկայացուցիչների պալատում հրատապ հարցերի ներքո ներկայացվել է **«Ադրբեջանում գերության մեջ գտնվող հայ ռազմագերիների և քաղաքացիական անձանց վերադարձի վերաբերյալ՝ ի կատարումն 2020թ. նոյեմբերի 9-ի հրադադարի մասին հայտարարության» բանաձևը**, որն ընդունվել է միաձայն:

Փետրվարի 25-ին Նիդերլանդների խորհրդարանը բանաձև է ընդունել, որում կոչ է արել կառավարությունը վերջնականապես և հստակ ձևով ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ որպես պատմությանն առերեսվելու, հաշտեցումն առաջ մղելու և դրա կրկնությունը կանխելու արդյունավետ միջոց: Մեկ այլ

բանաձևով Խորհրդարանը արձանագրում է Ադրբեջանի անընդունելի քայլերը հայ ռազմագերիներին և քաղաքացիական անձանց վերադարձնելու առումով՝ կոչ անելով կառավարությանը առավելագույն ջանքեր գործադրել Ադրբեջանի կողմից իր պարտավորությունները կատարելու և հայերին հայրենադարձելու ուղղությամբ:

Մայիսի 25-ին Նիդերլանդների Ներկայացուցիչների պալատը ձայների գերակշիռ մեծամասնությամբ ընդունել է բանաձև, որով կոչ է անում կառավարությանը՝ ջանքեր գործադրել Եվրոպական միության կողմից Ադրբեջանին Հայաստանի տարածքից զինված ուժերն անհապաղ դուրս բերելու պահանջ ներկայացնելու ուղղությամբ:

Հունիսի 17-ին Նիդերլանդների ներկայացուցիչների պալատը ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունել է բանաձև, որը պահանջում է՝ ազատ արձակել հայ ռազմագերիներին և քաղաքացիական անձանց:

Նոյեմբերի 10-ին Լյուքսեմբուրգի խորհրդարանը միաձայն բանաձև է ընդունել, որով կոչ է անում կառավարությանը չսատարել Ադրբեջանի և Եվրոպական միության միջև համագործակցության խորացմանը՝ մինչև չհայրենադարձվեն Ադրբեջանում ապօրինաբար պահվող բոլոր հայ ռազմագերիները և քաղաքացիական անձինք:

Մարտի 16-ին տեղի է ունեցել **Շվեդիայի Թագավորության** ԱԳ նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Անն Լինդեի այցը Հայաստան:

Սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպումներ է ունեցել Ֆինլանդիայի և Շվեդիայի ԱԳ նախարարների հետ:

Դեկտեմբերի 2-ին, Ստոկհոլմում ԵԱՀԿ 28-րդ նախարարական խորհրդի շրջանակներում, ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպումներ է ունեցել Ֆինլանդիայի ԱԳ նախարար Պեկկա Հաավիստոյի և Շվեդիայի Ռիկսդագի ղեկավար Անդրեաս Նորլենի հետ:

Մարտի 12-ին Հայաստանի Հանրապետությունում **Դանիայի Թագավորության** արտակարգ և լիազոր դեսպան Օլե Էկբերգը (նստավայրը՝ Կիև)՝ հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին: Նույն օրն իր հավատարմագրերն է հանձնել նաև Հայաստանի Հանրապետությունում Ֆինլանդիայի Հանրապետության դեսպան Կիրսթի Նարինենին (նստավայրը՝ Հելսինկի):

Մարտի 25-ին Հայաստանի Հանրապետությունում **Իսլանդիայի Հանրապետության** արտակարգ և լիազոր դեսպան Աուրնի Տոր Սիգուրդսոնը (նստավայրը՝ Մոսկվա)՝ հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահին:

Հոկտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետությունում **Նորվեգիայի Թագավորության** արտակարգ և լիազոր դեսպան Հելեն Սանդ Անդրեսենը հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին:

Հոկտեմբերի 11-ին և **դեկտեմբերի 6-ին** Երևանում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ համապատասխանաբար Դանիայի և **Ֆինլանդիայի** արտաքին գործերի գերատեսչությունների հետ:

Ապրիլի 28-ին կայացել են քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և **Շվեյցարիայի Համադաշնության** ԱԳ գերատեսչությունների միջև:

Զարգացման և համագործակցության շվեյցարական գործակալության կողմից Հայաստանում շարունակվող տնտեսական զարգացման ծրագրերի ծիրում Հարավային Կովկասի համար նոր ռազմավարությունը հաստատվել է:

Փետրվարին աշխատանքային այցով Հայաստանում է գտնվել **Միացյալ Թագավորության (ՄԹ)** Եվրոպայի և Ամերիկայի հարցերով նախարար Ուենդի Մորթընը, ով հանդիպումներ է ունեցել ՀՀ բարձրաստիճան ղեկավարության հետ և ներկա գտնվել ՀՀ-ում ՄԹ դեսպանության նոր գրասենյակի բացմանը:

Մարտի 31-ին Երևանում իր հավատարմագրերն է հանձնել ՄԹ նորանշանակ դեսպան Ջոն Գալահերը, իսկ **հուլիսին** ՄԹ-ում ՀՀ դեսպան է նշանակվել Վարուժան Ներսեսյանը:

Տարվա ընթացքում մի քանի անգամ Հայաստանի սահմանային բնակավայրեր է այցելել Բարոնուհի Քոքսի գլխավորած պատվիրակությունը: Այցերի արդյունքներով զեկույցներ են պատրաստվել, որոնք տրամադրվել են ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր մարմիններին:

Մայիսին **Իսպանիայի** Կոնգրեսի արտաքին գործերի հանձնաժողովն ընդունել է միջնորդություն՝ հորդորելով կառավարությանը պահանջել Ադրբեջանի իշխանություններից իրագործել 2020թ. նոյեմբերի 9-ի համաձայնագիրը, ազատ արձակել բոլոր հայ գերիներին և տեղեկություններ տրամադրել Ադրբեջանում պահվող բոլոր անձանց վերաբերյալ:

Հոկտեմբերի 6-ից 9-ը տեղի է ունեցել ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի պետական այցը **Իտալիա:**

Հոկտեմբերի 10-ից 11-ը տեղի է ունեցել ՀՀ նախագահի այցը Սուրբ Աթոռ: Այցի շրջանակներում ստորագրվել է մշակույթի ոլորտում համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր: **Հոկտեմբերի 27-ին** Հայաստանում հիմնվել է Սուրբ Աթոռի նստավայր առաքելական նվիրակությունը:

Հոկտեմբերի 27-ից 28-ը Հայաստան է այցելել **Սուրբ Աթոռի** պետքարտուղարի ընդհանուր հարցերով փոխանորդ Էդգար Պենյա Պառան:

Սեպտեմբերի 15-ից 18-ը Պորտուգալիայի արտաքին առևտրի և ներդրումների գործակալության նախագահի գլխավորած պատվիրակությունն այցելել է Հայաստան:

Փետրվարի 4-ին Չեխիայի Պատգամավորների պալատի Արտաքին հարաբերությունների կոմիտեն ընդունել է ԼՂ հակամարտությանն առնչվող բանաձև՝ գերիներին վերադարձնելու Ադրբեջանին ուղղված կոչով: Նույն կոմիտեն **հունիսի 10-ին** ընդունել է ԼՂ-ում հետպատերազմական իրադրության՝ գերիների և տեղահանվածների վերաբերյալ բանաձև՝ կրկին Ադրբեջանին ուղղված կոչերով:

Հոկտեմբերի 1-ին տեղի է ունեցել Չեխիայի ԱԳ նախարար Յակուբ Կուլիանեկի աշխատանքային այցը Հայաստան, որն ուղեկցվել է նաև համատեղ բիզնես ֆորումի անցկացմամբ: **Հոկտեմբերի 15-ին** անց է կացվել տնտեսական համագործակցության հարցերով հայ-չեխական միջկառավարական հանձնաժողովի 5-րդ նիստը:

Սեպտեմբերի 22-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 76-րդ նստաշրջանի շրջանակներում հանդիպում է ունեցել **Հունաստանի** ԱԳ նախարար Նիկոս Դենդիասի հետ:

Դեկտեմբերի 2-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը ԵԱՀԿ ԱԳ նախարարական համաժողովի շրջանակներում հանդիպում է ունեցել Հունաստանի ԱԳ նախարար Նիկոս Դենդիասի հետ:

Սեպտեմբերի 23-ին ՄԱԿ ԳԱ 76-րդ նստաշրջանի շրջանակներում Նյու Յորքում ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է **Կիպրոսի Հանրապետության** ԱԳ նախարար Նիկոս Խրիստոդուլիդեսի հետ:

Դեկտեմբերի 15-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն Արևելյան գործընկերության գագաթնաժողովի շրջանակում հանդիպում է ունեցել Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսի հետ:

Սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում ՄԱԿ ԳԱ 76-րդ նստաշրջանի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և **Ռումինիայի** ԱԳ նախարար Բոգդան Աուրեսկուի միջև:

Դեկտեմբերի 2-ին տեղի է ունեցել ՀՀ և **Էստոնիայի** ԱԳ նախարարների հանդիպումը Ստոկհոլմում՝ ԵԱՀԿ ԱԳ նախարարների համաժողովի շրջանակներում:

Սեպտեմբերի 14-ին տեղի է ունեցել **Սլովակիայի** Արտաքին և եվրոպական գործերի նախարար Իվան Կորչոկի այցը Հայաստան:

10. Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներ

Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ համագործակցության հետագա զարգացման ուղղությամբ:

Հայաստան-Չինաստան հարաբերություններում արձանագրվել է դրական դինամիկա, սակայն COVID-19 համավարակը շարունակել է էականորեն ազդել տարբեր բնագավառներում երկկողմ օրակարգի առաջմղման վրա: Այնուամենայնիվ, շարունակվել են քաղաքական, առևտրատնտեսական, գիտակրթամշակութային երկկողմ կապերի զարգացմանն ուղղված նախաձեռնությունները: **Մայիսի 26-ին** ՀՀ և ՉԺՀ արտաքին գործերի նախարարությունների միջև առցանց եղանակով տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ, որի ընթացքում ՉԺՀ ԱԳ նախարարի տեղակալ Լը Յուչընը նշել է, որ Չինաստանը սատարում է ՀՀ տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը՝ ընդգծելով, որ 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթների լիակատար իրականացումը տարածաշրջանային անվտանգության և կայունության պահպանման գրավականն է:

Ապրիլի 20-ին փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել ՀՀ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի և Արտերկրում ձեռնարկությունների զարգացման չինական ասոցիացիայի (China Overseas Development Association) միջև, իսկ ապրիլի 26-ին՝ առևտրատնտեսական համագործացության հաստատման հուշագիր՝ Հայաստանի «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի և Չինաստան-ՇՀԿ տարածաշրջանային տնտեսական և առևտրային համագործակցության ցուցադրության գոտու (China-SCO Local Economic and Trade Cooperation Demonstration Zone) միջև առևտրատնտեսական համագործացության հաստատման հուշագիր:

Դեկտեմբերի 20-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ՉԺՀ մշակույթի և զբոսաշրջության նախարարության միջև ստորագրվել է մշակութային համագործակցության ծրագիրը **2022-2025թթ.** ժամանակահատվածի համար:

Փետրվարի 18-ին Հայաստանի և **Հնդկաստանի** արտգործնախարարությունների միջև տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ փոխարտգործնախարարների մակարդակով: Քննարկվել են Հնդկաստանի ԱԳ նախարարի Հայաստան կատարած այցի ընթացքում ձեռքբերված պայմանավորվածությունները, ինչպես նաև երկկողմ օրակարգի հարցեր: Անդրադարձ է կատարվել տարածաշրջանային անվտանգության հարցերին:

Մարտին Հնդկաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան է նշանակվել Յուրի Բաբախանյանը:

Սեպտեմբերի 16-ին Դուշանբեում տեղի ունեցած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության և Շանհայի համագործակցության կազմակերպության համատեղ նիստի շրջանակներում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումը Հնդկաստանի Հանրապետության ԱԳ նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի հետ:

Հոկտեմբերի 12-ից 13-ը պաշտոնական այցով Երևան է ժամանել Հնդկաստանի ԱԳ նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի գլխավորած պատվիրակությունը, ինչը Հնդկաստանի ԱԳ նախարարի մակարդակով առաջին այցն էր Հայաստան: Այցի շրջանակներում Հնդկաստանի ԱԳ նախարարը հանդիպումներ է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի, ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի և ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Հնդկաստանի ԱԳ նախարարը նաև այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր, Մատենադարան, Հայաստանի ազգային պատկերասրահ և Երևանում Մահաթմա Գանդիի հուշարձան և մասնակցել ծառատունկի արարողությանը:

Հնդկաստանի ԱԳ նախարարի Հայաստան պաշտոնական այցի ընթացքում Հայաստանը հայտնել է իր աջակցությունը ՄԱԿ ԱԽ-ի Հնդկաստանի մշտական անդամակցությանը:

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Հնդկաստանի Հանրապետության ԱԳ նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի միջև կայացած հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել պաշտպանության բնագավառներում համագործակցությունն ընդլայնելու և խորացնելու վերաբերյալ:

Փետրվարի 16-ին Ճապոնիայի կառավարությունը որոշում է կայացրել ՀՀ և ԼՂ հետպատերազմյան վերականգնողական աշխատանքների համար 3.6 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք հումանիտար օգնություն հատկացնելու մասին: **Մարտին** Ժնևում ՄԻԽ-ում կայացած քննարկումների ընթացքում Ճապոնիայի ներկայացուցիչը գերիների հարցով քննարկումների ընթացքում հանդես է եկել հայանպաստ դիրքորոշմամբ:

Հուլիսին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանն աշխատանքային այց է կատարել Ճապոնիա՝ Տոկիոյի Օլիմպիական խաղերի շրջանակներում: ՀՀ նախագահը այցի շրջանակներում առանձնազրույց է ունեցել կայսր Նարուհիտոյի հետ, ինչպես նաև հանդիպել Ճապոնիայի վարչապետ Սուգա Յոշիհիդեի հետ: Հաշվետու տարում երկու երկրները նշանակել են նոր արտակարգ և լիազոր

դեսպաններ՝ համապատասխանաբար Ֆուկուշիմա Մասանորին՝ ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան և Արեգ Հովհաննիսյանին՝ ՀՀ դեսպան Ճապոնիայում:

Նոյեմբերին տեղի է ունեցել ՀՀ նախագահի աշխատանքային այցը **Սինգապուր**, որի շրջանակներում նա հանդիպումներ է ունեցել վարչապետ Լի Սյան Լունի և նախագահ Հալիմա Յակոբի հետ, մասնակցել է Բլումբերգի միջազգային տնտեսական համաժողովին:

Նոյեմբերին հավատարմագրերը հանձնելու նպատակով Հայաստան է այցելել ՀՀ-ում **Թաիլանդի Թագավորության** դեսպան Սասիվաթ Վոնգսինավաթը (նստավայրը՝ Մոսկվա): Հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ տարբեր ոլորտներում համագործակցության խորացման ուղղությամբ:

11. Միջին արևելքի և Աֆրիկայի երկրներ

2021 թվականին շարունակվել են աշխատանքները Միջին Արևելքի և Աֆրիկայի երկրների հետ համագործակցության զարգացման ուղղությամբ:

Փետրվարի 23-ին Բաղդադում անցկացվել են հայ-իրաքյան քաղաքական խորհրդակցություններ՝ ԱԳ փոխնախարարների մակարդակով: Քննարկվել են տարբեր ոլորտներում երկկողմ հարաբերությունների զարգացման, առևտրատնտեսական կապերի ընդլայնման հնարավորությունների, տարածաշրջանային հիմնախնդիրների հետ կապված հարցեր:

Փետրվարի 24-ին տեղի է ունեցել **Էրբիլում ՀՀ գլխավոր հյուպատոսության պաշտոնական բացումը:** Աշխատանքային այցով Էրբիլում գտնվող ՀՀ ԱԳ նախարարի տեղակալը հանդիպումներ է ունեցել Քուրդիստանի Ժողովրդավարական կուսակցության նախագահի, Իրաքյան Քուրդիստանի նախագահի, վարչապետ Մասրուր Բարզանիի, փոխվարչապետ Քուբադ Թալաբանիի, խորհրդարանի նախագահի և արտաքին գործերի դեպարտամենտի պետի (ԱԳ նախարար) հետ: Հանդիպումների ընթացքում երկուստեք պատրաստակամություն է հայտնվել խորացնելու բազմոլորտ համագործակցությունը:

Փետրվարի 24-ին կայացել է նաև Էրբիլում Հայաստանի մշակութային տան բացումը:

Մարտի 25-ին տեղի է ունեցել **Իրաքի** պաշտպանության նախարար Ջումաա Ինադ Սաադուն Խատտաբի այցը Հայաստան, որի շրջանակներում վերջինս հանդիպել է ՀՀ վարչապետին, պաշտպանության, արտաքին գործերի և բարձրագույն տեխնոլոգիական արդյունաբերության նախարարներին: Հայաստանի և Իրաքի պաշտպանական գերատեսչությունների միջև ստորագրվել է մտադրությունների մասին հուշագիր: **Մայիսի 14-ից 17-ը** տեղի է ունեցել

Իրաքյան Քուրդիստանի փոխվարչապետ Քուբադ Թալաբանիի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան, որի շրջանակներում վերջինս հանդիպել է ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանին, ԱԳ նախարար Արա Այվազյանին:

Մարտի 11-ին ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանը աշխատանքային այց է կատարել **Արաբական Միացյալ Էմիրություններ**, որտեղ հանդիպել է ԱՄԷ արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարար Աբդալլահ բին Զայեդ Ալ Նահյանի հետ: Հանդիպման օրակարգում առանցքային տեղ են զբաղեցրել տարածաշրջանային անվտանգության և կայունության հարցերը:

Հոկտեմբերին 2-ին Expo 2020 Dubai ցուցահանդեսին բացվել է Հայաստանի տաղավարը, որն այցելել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորած պատվիրակությունը:

Հոկտեմբերի 27-ին ՀՀ նախագահը կարճատև աշխատանքային այց է իրականացրել ԱՄԷ՝ հանդիպումներ ունենալով Աբու Դաբիի թագաժառանգ, երկրի Զինված ուժերի գերագույն հրամանատարի տեղակալ, շեյխ Մուհամմադ բին Զայեդ Ալ Նահյանի հետ:

Նոյեմբերի 12-ին «Դուբայի ավիացիոն ցուցահանդեսին» մասնակցելու նպատակով ՀՀ պաշտպանության նախարարի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այց է կատարել ԱՄԷ:

Նոյեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության և Էմիրություններում գրանցված «Մասդար» ընկերության միջև ստորագրվել է կառավարության աջակցության համաձայնագիր՝ 200 մեգավատ հզորությամբ ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման վերաբերյալ: Ծրագրի շրջանակում կառուցվելիք արևային կայանը կլինի խոշորագույնը Հայաստանում:

Մարտի 22-ին ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանը հեռախոսազրույց է ունեցել **Լիբանանի Հանրապետության** արտաքին գործերի և արտագաղթյալների նախարարի պաշտոնակատար Շարբել Ուեհբեի հետ: Ընդգծվել է երկկողմ օրակարգի առավել ընդլայնման և հարստացման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու երկու երկրների պատրաստակամությունը:

Ապրիլի 9-ին Լիբանանի արտաքին գործերի և արտագաղթյալների նախարարի պաշտոնակատար Շարբել Ուեհբեն ուղերձ է հղել Հայոց ցեղասպանության 106-րդ տարելիցի կապակցությամբ:

Ապրիլի 21-ից 27-ը կայացել է Լիբանանի նախագահի հատուկ ներկայացուցիչ, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի պաշտոնակատար Վարդինե Օհանյանի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան՝ մասնակցելու Հայոց ցեղասպանության 106-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին: Պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ՀՀ նախագահի, ԱԳ և ԿԳՄՍ նախարարների հետ:

Նոյեմբերի 2-ին ՄԱԿ Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի 26-րդ համաժողովին (COP26) մասնակցելու նպատակով Գլազգոյում գտնվող ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը զրույցներ է ունեցել Լիբանանի Հանրապետության վարչապետ Նաջիբ Միկաթիի, Իսրայելի Պետության վարչապետ Նաֆթալի Բենեթի և Պաղեստինի Ազգային իշխանության վարչապետ Մուհամմադ Շթայեհի հետ:

Հայոց ցեղասպանության 106-րդ տարելիցի միջոցառումները լուսաբանելու և միջոցառումներին մասնակցելու նպատակով **ապրիլի 21-ից 29-ը** Երևան են ժամանել **Եգիպտոսի** տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, լրագրողներ:

Սեպտեմբերի 23-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 76-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Եգիպտոսի Արաբական Հանրապետության ԱԳ նախարար Սամեհ Շուքրիի հետ: Քննարկվել են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ և հայ-ադրբեջանական սահմանին զարգացումները, տարբեր ոլորտում համագործակցության հեռանկարները՝ մասնավորապես Արևելյան միջերկրականի գազային ֆորումի և Հայաստանի միջև համագործակցության հնարավորությունները:

Մայիսի 17-ին Հայաստանի Հանրապետության և **Սիրիայի Արաբական Հանրապետության** կառավարությունների միջև ստորագրվել է օդային հաղորդակցության մասին համաձայնագիր: **Սեպտեմբերի 4-ից** մեկնարկել է Հալեպ-Երևան-Հալեպ չվերթը:

Սեպտեմբերի 24-ին ՄԱԿ ԳԱ 76-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Սիրիայի ԱԳ նախարար Ֆեյսալ Ալ-Միկդադի հետ: Կողմերը խիստ մտահոգություն են հայտնել Արցախի դեմ սանձազերծված ագրեսիայի ընթացքում Ադրբեջանի կողմից Սիրիայից վարձկան ահաբեկիչների ներգրավման առնչությամբ: Անդրադառնալով սիրիական ճգնաժամին՝ ՀՀ ԱԳ նախարարը նշել է, որ ճգնաժամի առաջին իսկ օրվանից Հայաստանը հանդես է եկել Սիրիայի միասնության և ինքնիշխանության պահպանման և համապարփակ երկխոսությամբ խնդրի կարգավորման օգտին:

Հոկտեմբերի 25-ին ՀՀ «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՄԱԿ Հակաականային գործողությունների ծառայության (UNMAS-United Nations Mine Action Service) միջև ստորագրվել է համագործակցության պայմանագիր: Նոյեմբեր 21-ից հայ մասնագետները Դամասկոսի արվարձան Դարայա քաղաքում ՄԱԿ հովանու ներքո սկսել են ականազերծման աշխատանքները:

Կատարի պատվիրակությունը մասնակցել է **հուլիսի 22-ից օգոստոսի 4-ը** Հայաստանում անցկացված Միջազգային բանակային խաղերի «Խաղաղության մարտիկ» մրցույթին:

Դեկտեմբերի 8-ին ՀՀ նախագահն աշխատանքային այց է կատարել Կատարի Պետություն, որի ընթացքում հանդիպել է Կատարի էմիր շեյխ Թամիմ բին Համադ Ալ Թանիի, Կատարի հիմնադրամի, «Education Above All» հիմնադրամի նախագահ և ՄԱԿ կայուն զարգացման նպատակների պաշտպան շեյխա Մոզա բինթ Նասերի հետ:

Սեպտեմբերի 23-ին ՄԱԿ ԳԱ 76-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու նպատակով Նյու Յորքում գտնվող ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է **Հորդանանի Հաշիմյան Թագավորության** փոխվարչապետ, ԱԳ և արտագաղթյալների նախարար Այման Սաֆադիի հետ: Քննարկվել են հայ-հորդանանյան բազմոլորտ համագործակցության հետագա խորացմանն առնչվող հարցեր: Անդրադարձ է կատարվել նաև Սուրբ Հողում հայկական պատմամշակութային ու կրոնական ժառանգությանն առնչվող հարցերին:

Նոյեմբերի 24-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել **Իսրայելի** ԱԳ նախարար Յաիր Լապիդի հետ: Քննարկվել են հայ-իսրայելական առկա հարաբերությունները և հեռանկարները: Անդրադարձ է կատարվել նաև Սուրբ Հողում հայկական պատմամշակութային ու կրոնական ժառանգությանն առնչվող հարցերին:

Նոյեմբերի 11-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր համաժողովի 41-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու նպատակով Փարիզում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել **Պաղեստինի** ԱԳ նախարար Ռիադ Մալքիին: Հանդիպմանը կարևորվել է հայ-պաղեստինյան քաղաքական երկխոսության խորացմանն ուղղված գործնական քայլերի ձեռնարկումը, ինչպես նաև քննարկվել են Սուրբ Հողում հայկական պատմամշակութային ու կրոնական ժառանգությանն առնչվող հարցեր:

Դեկտեմբերի 11-ից 14-ը ՀՀ է այցելել Պաղեստինի Եկեղեցիների հարցով բարձրագույն նախագահական կոմիտեի ղեկավար Մուին Էլիաս Յուսեֆ Խուրիի պատվիրակությունը, որը հանդիպումներ է ունեցել ՀՀ նախագահի, ԱԳ նախարարի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Քննարկվել են Սուրբ Հողում հայկական պատմամշակութային և կրոնական ժառանգությանը վերաբերող հարցեր:

Հոկտեմբերի 27-ին նախագահ Սարգսյանը Արաբական Միացյալ Էմիրություններ այցի ընթացքում հանդիպել է **Բահրեյնի** թագավոր Համադ բին

Իսա Ալ Խալիֆայի հետ: Քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Հոկտեմբերի 26-ին ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը աշխատանքային այց է կատարել **Սաուդյան Արաբիա՝** «Ապագա ներդրումային նախաձեռնություն» 5-րդ համաժողովին մասնակցելու նպատակով:

12. Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրներ

Մարտի 9-ին ՀՀ-ում **Կանադայի** արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Մոսկվա) Էլիսընն Լրքլերը աշխատանքային այցով ժամանել է Հայաստան: ԱԳՆ պաշտոնյաների հետ կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են հետպատերազմյան վիճակի, ԼՂ հակամարտության կարգավորման, ԼՂ դեմ Թուրքիայի կողմից օգտագործված կանադական ծագման ռազմական սարքավորումների հետաքննության արդյունքների և հայ-կանադական համագործակցության վերաբերյալ հարցեր: Կանադական պատվիրակությունը մասնակցել է **ապրիլի 22-ին՝** Հայոց ցեղասպանության 106-րդ տարելիցի հիշատակի և ոգեկոչման արարողություններին:

Փետրվարի 23-ին Արգենտինայի Հանրապետության նորանշանակ դեսպան Մարիանո Վեռգառան իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին:

Օգոստոսի 16-ից 18-ը կայացել է **Ուրուգվայի** ԱԳ նախարարի պաշտոնական այցը Հայաստան: Ուրուգվայի արտգործնախարարն ՀՀ ԱԳ նախարարի հետ հանդիպմանը կարևորել է Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունների հետագա զարգացումը: Հանդիպմանը քննարկվել են նաև Երևանում Ուրուգվայի դեսպանության բացման հետ կապված հարցերը: Այցի ընթացքում Ուրուգվայի ԱԳ նախարարին ընդունել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Հոկտեմբերի 30-ին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է Հայաստանում **Բրազիլիայի** դեսպան Աժեմար Սանկտոսին: Կարևորելով հայ-բրազիլական փոխգործակցությունը, արտգործնախարարը միաժամանակ ափսոսանք է հայտնել հուլիսին Ադրբեջանում Բրազիլիայի դեսպանի՝ Շուշի այցի կապակցությամբ: Խնդրի առնչությամբ դեռևս հուլիսին ԱԳՆ էր հրավիրվել դեսպան Սանկտոսը, ում փոխանցվել էր բողոքի հայտագիր:

Սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ը Երևանում է գտնվել ՀՀ-ում **Պերուի Հանրապետության** դեսպան Խուան Խենարո դել Կամպո Ռոդրիգեսը (նստավայրը՝ Մոսկվա), հավատարմագրերը հանձնելու կապակցությամբ: Որպես երկկողմ շփումներին և փոխանակումներին նպաստող կարևոր գործիք

դիտարկվել է Պերուի և Հայաստանի միջև մուտքի արտոնագրային ռեժիմի ազատականացման համաձայնագրի կնքումը:

Մարտի 8-ին ԱԳ նախարար Արա Այվազյանը հեռախոսազրույց է ունեցել **Կուբայի** ԱԳ նախարար Բռունո Էդուարդո Ռոդրիգես Պարիլյայի հետ: Նախարար Պարիլյան շնորհակալություն է հայտնել 2020թ. դեկտեմբերից ԵԱՏՄ կառույցում Կուբային դիտորդի կարգավիճակ շնորհելու առնչությամբ Հայաստանի ցուցաբերած աջակցության համար: Զրույցի ընթացքում քննարկվել են երկկողմ բազմաբնույթ օրակարգն առավել զարգացնելու հարցեր, այդ թվում՝ առողջապահական և կրթական համագործակցություն, ԱԳՆ-երի միջև քաղաքական խորհրդակցությունների մեխանիզմի կիրառում, համագործակցություն միջազգային կառույցներում:

Ապրիլի 24-ից 28-ը ՀՀ ԱԳ նախարար Արա Այվազյանի հրավերով, Հայաստան է այցելել **Կենտրոնական ամերիկյան խորհրդարանի** (PARLACEN) նախագահ Ֆաննի Կառոլինա Սալինաս Ֆերնանդեսի գլխավորած պատվիրակությունը՝ մասնակցելու ապրիլի 24-ի հիշատակի միջոցառումներին: Պատվիրակության կազմում էին Խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի փոխնախագահ Դանիել Օրտեգա Ռեյեսը (Նիկարագուա) և ղեկավար կազմի քարտուղար Մարիո Ռոբերտո Էրնանդեսը (Գվատեմալա): Պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի, խորհրդարանի մի շարք պատգամավորների հետ: **Ապրիլի 26-ին** Ազգային ժողովում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Կենտրոնական ամերիկյան խորհրդարանի միջև համագործակցության մասին» համաձայնագիրը:

Տարածաշրջանի մի շարք երկրների հետ նախաձեռնվել է մուտքի արտոնագրային ռեժիմի պարզեցման գործընթաց:

13. Միջազգային բազմակողմ համագործակցություն

13.1. Միավորված ազգերի կազմակերպություն

Շարունակվել է ՀՀ-ի ակտիվ ներգրավվածությունը Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում: Հետպատերազմյան և կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ճգնաժամային իրավիճակները էական ազդեցություն են ունեցել միջազգային ասպարեզում իրականացվող աշխատանքի ինչպես բովանդակության, այնպես էլ մասնակցության ձևաչափերի վրա:

Հաշվետու տարում **Հայաստանը համահեղինակել է ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 20 բանաձև**, ակտիվ աշխատանքներ է իրականացրել ՄԱԿ-ի

կոմիտեներում, ներառյալ՝ **նախագահելով ՄԱԿ-ի 5-րդ՝ Բյուջետային և վարչական հարցերով կոմիտեում:**

ՀՀ վարչապետը **սեպտեմբերի 24-ին** տեսաուղերձով հանդես է եկել ՄԱԿ ԳԱ 76-րդ նստաշրջանի առցանց բարձրաստիճան հատվածին: Ապահովվել է նաև Հայաստանի բարձրաստիճան պատվիրակությունների մասնակցությունը ՄԱԿ-ի շրջանակներում կազմակերպված մի շարք միջոցառումների, այդ թվում՝ ՄԱԿ ԳԱ կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ նստաշրջանին, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կողմերի համաժողովին, Առողջապահության համաշխարհային ասամբլեայի հատուկ նստաշրջանին, Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի 26-րդ համաժողովին և այլն:

ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը Նյու Յորքում մասնակցել է ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 76-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածին, որի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել ՄԱԿ Գլխավոր քարտուղարի, Քաղաքական և խաղաղաշինության հարցերով ԳՔ տեղակալի, Քաղաքակրթությունների դաշինքի բարձր ներկայացուցչի, Ցեղասպանության հարցերով ԳՔ հատուկ խորհրդականի հետ: Այցի ընթացքում տեղի են ունեցել նաև երկկողմ հանդիպումներ տասնյակ պետությունների ԱԳ նախարարների հետ:

Հաշվետու տարում առաջ է մղվել զարգացման օրակարգից բխող հանձնառությունների կատարումը, շարունակվել է 2030 օրակարգի կայուն զարգացման նպատակների իրականացմանն ուղղված ազգային գործընթացների համակարգումը: **Հուլիսի 16-ին** ԱԳ նախարարի պարտականությունները կատարող Արեմն Գրիգորյանը ելույթ է ունեցել ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի հովանու ներքո անցկացվող Կայուն զարգացման բարձր մակարդակի քաղաքական ֆորումին՝ ներկայացնելով ԿԶՆ-ների իրականացման ուղղությամբ Հայաստանի հանձնառությունների կատարման ընթացքը:

Միջազգային կազմակերպություններում 2021թ. կայացած ընտրությունների արդյունքում Հայաստանն ընտրվել է. ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության գործադիր խորհրդի անդամ՝ 2021-2025թթ. համար; ՅՈՒՆԵՍԿՕ Գործադիր խորհրդի անդամ՝ 2021-2025թթ. համար և Հայաստանը վերընտրվել է նաև ՅՈՒՆԵՍԿՕ Գլխավոր համաժողովի 42-րդ նստաշրջանի իրավական կոմիտեի անդամ:

Բացի այդ, 2021թ. ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչն ընտրվել է ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 76-րդ նստաշրջանի Բյուջետային և վարչական (հինգերորդ) կոմիտեի նախագահ:

ՄԱԿ Առաջին կոմիտեում պատրաստվել և ՄԱԿ են ներկայացվել **«Տարածաշրջանային և ենթատարածաշրջանային մակարդակներում**

սպառազինությունների վերահսկում» և **«Տարածաշրջանային և ենթատարածաշրջանային մակարդակներում վստահության կառուցման միջոցներ»** խորագրով ազգային զեկույցները՝ ի կատարումն Գլխավոր ասամբլեայի 73/34 և 74/39 բանաձևերի դրույթների:

Դեկտեմբերի 13-ից 17-ը ՀՀ պատվիրակությունը մասնակցել է ՏՀՏ ոլորտում զարգացումների վերաբերյալ Բաց կազմով աշխատանքային խմբի առաջին հանդիպմանը:

13.2 Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն

2021թ. ԵԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչությունը շարունակել է աշխատանքներն՝ ուղղված ՀՀ դիրքորոշումների ներկայացմանը կազմակերպության օրակարգային հարցերի, ինչպես նաև ԼՂ հիմնահարցի կարգավորման և տարածաշրջանային անվտանգության խնդիրների շուրջ:

Դեկտեմբերի 2-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մասնակցել է ԵԱՀԿ Ստոկհոլմի նախարարական համաժողովին: Նախարարը ներկայացրել է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ սանձազերծված պատերազմից և 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության ստորագրումից մեկ տարի անց ստեղծված իրավիճակը:

ԵԱՀԿ նախագահության հետ համագործակցության շրջանակներում **մարտի 16-ին** կայացել է ԵԱՀԿ գործող նախագահ, Շվեդիայի ԱԳ նախարարի այցը Հայաստան: Նա հանդիպել է ՀՀ նախագահին, ՀՀ վարչապետին և ԱԳ նախարարին: Ուշադրության է արժանի Անն Լինդեի հանդիպումը Արցախի ԱԳ նախարար Դավիթ Բաբայանի հետ:

ԵԱՀԿ Մշտական խորհրդի օրակարգում են պահվել ԼՂ հակամարտության, Ադրբեջանի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի ոտնահարման, հայ ռազմագերիներին, Ադրբեջանի վերահսկմանն անցած տարածքներում հայկական մշակութային ժառանգության պահպանման, ՀՀ ինքնիշխան տարածք Ադրբեջանի ներխուժման և հայ-ադրբեջանական սահմանային բախումներին վերաբերող հարցերը, «Թուրքիայի և օտարերկրյա ահաբեկիչ զինյալների անմիջական մասնակցությամբ Ադրբեջանի ագրեսիան ընդդեմ Արցախի և Հայաստանի» վերնագրով ընթացիկ հարցը:

Ապրիլի 12-ից օգոստոսի 29-ը Հայաստանը նախագահել է ԵԱՀԿ Անվտանգության Համագործակցության Ֆորումում (FSC), ինչը Հայաստանի երկրորդ նախագահությունն էր 2004 թվականից ի վեր:

Նախագահության ընթացքում կազմակերպվել է անվտանգության երկխոսության ձևաչափով 9 թեմատիկ հանդիպում՝ նվիրված միջազգային

մարդասիրական իրավունքին, նոր սերնդի պատերազմների սպառնալիքներին, սպառազինությունների վերահսկմանը, վստահության և անվտանգության կառուցման միջոցներին, զորավարժությունների վերաբերյալ ռազմական թափանցիկությանը, փոքր ու թեթև զինատեսակների ոլորտում ԵԱՀԿ աջակցության մեխանիզմին, ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1540 և 1325 բանաձևերին, անվտանգության տարածաշրջանային կառույցներին և ահաբեկչության բոլոր ձևերի դեմ պայքարին: Թեմատիկ քննարկումների ժամանակ ներկայացվել են 2020թ. ԼՂ դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքները: Հատուկ ընդգծվել են Ադրբեջանի զինված ուժերի կողմից թույլ տրված միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումները, ներառյալ՝ քաղաքացիական բնակչության ու ենթակառուցվածքների միտումնավոր և համակարգված թիրախավորումը, կասետային ու քիմիական տարրեր պարունակող զինատեսակների, մարտական անօդաչու թռչող սարքերի, բալիստիկ հրթիռների կիրառումը, հայ ռազմագերիների և պատանդների նկատմամբ նվաստացուցիչ, անմարդկային և դաժան վերաբերմունքի (ստորացման և ֆիզիկական բռնության, խեղումների) դրսևորումները, մշակութային ժառանգության ոչնչացումը, Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից օտարերկրյա ահաբեկիչների ներգրավումը:

13.3 Եվրոպայի խորհուրդ

2021թ. հունվարի 25-ին լրացել է Եվրոպայի Խորհրդին Հայաստանի անդամության 20 տարին, ինչի կապակցությամբ տեսաուղերձներով հանդես են եկել ՀՀ ԱԳ նախարարը և ԵԽ Գլխավոր քարտուղարը: Վերջինս բարձր է գնահատել ԵԽ աջակցությամբ Հայաստանում իրականացված բարեփոխումները: Նույն առիթով, **հոկտեմբերի 18-ին** ՀՀ ԱԳՆ-ում կազմակերպվել է ընդունելություն:

2021թ. ընթացքում ԵԽ Նախարարների կոմիտեում, ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ԵԽ Խորհրդարանական վեհաժողովում, ԵԽ մասնագիտացված մարմիններում հետևողական աշխատանք է տարվել Արցախի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության հետևանքով մարդու իրավունքների առումով և հումանիտար հետևանքները ներկայացնելու ու համապատասխան արձագանք ապահովելու նպատակով: ԵԽ իրավասու բոլոր ատյաններում պարբերաբար բարձրացվել է Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների, Արցախ միջազգային կառույցների մուտքի, պատմա-մշակութային ժառանգության պաշտպանության, սահմանային խնդիրների հարցերը: Նշված հարցերը քննարկվել են բարձրաստիճան հանդիպումների ընթացքում: ԵԽԽՎ նստաշրջաններին հարցադրումներ են արվել ԵԽ

պաշտոնյաներին: Շրջանառվել են մեծ թվով փաստաթղթեր, այդ թվում՝ ՀՀ և Արցախի ԱԳՆ ու ՄԻՊ զեկույցները:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության, դրա հետևանքների և Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների առնչությամբ հայտարարություններով հանդես են եկել ԵԽ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի Եվրոպական Հանձնաժողովը (մարտի 31), ԵԽԽՎ Միգրացիայի (ապրիլի 12) և Մոնիտորինգային հանձնաժողովները (ապրիլի 22), ԵԽ Գլխավոր քարտուղարը (նոյեմբերի 17) :

Հայաստանի դիմումի հիման վրա՝ **հունվարի 4-ին** և **նոյեմբերի 27-ին** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միջանկյալ միջոց է կիրառել Ադրբեջանի նկատմամբ: **Փետրվարի 1-ին** ՀՀ կառավարությունը միջպետական գանգատ է ներկայացրել **ՄԻԵԴ** ընդդեմ Ադրբեջանի:

Մարտի 16-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ԵԽ Նախարարների կոմիտեին ծանուցել է Ադրբեջանի կողմից ՄԻԵԴ՝ հայ ռազմագերիների և պահվող անձանց վերաբերյալ միջանկյալ միջոցները չկատարելու և վերջինիս հետ չհամագործակցելու հանգամանքի մասին: **Ապրիլի 14-ից 15-ը** և **ապրիլի 28-ին** Նախարարների կոմիտեում քննարկվել է հայ ռազմագերիների հարցը: Հրապարակվել է ԵՄ հայտարարությունը, որով կարևորվել է «ռազմագերիների և պահվող անձանց վերադարձը՝ անկախ նրանց ձերբակալման հանգամանքներից» և ընդգծվել է ՄԻԵԴ-ի հետ համագործակցելու Ադրբեջանի պարտավորությունը:

Ապրիլի 20-ին ԵԽԽՎ լիագումար նստաշրջանում տեղի է ունեցել ընթացիկ քննարկում «Հայ ռազմագերիներ, այլ պահվող անձինք և տեղահանվածներ» թեմայով:

Ապրիլի 20-ին ԵԽ Մարդու իրավունքների Հանձնակատարը Բաքվում բացված «պուրակի» վերաբերյալ քննադատական նամակ է հասցեագրել Ադրբեջանի նախագահին:

Մայիսի 21-ին ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնակատարն առցանց մասնակցել է ԵԽ նախարարների կոմիտեի 131-րդ նստաշրջանին՝ անդրադառնալով 2020թ. արցախյան պատերազմի հումանիտար հետևանքներին և այս առումով ԵԽ-ից ակնկալիքներին:

Հունիսի 15-ին ԵԽ տեղական և շրջանային իշխանությունների կոնգրեսի լիագումար նիստում հաստատվել են Հայաստանում տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի իրականացման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցը և համապատասխան առաջարկությունը:

Հունիսի 29-ին ԵԽ Գլխավոր Քարտուղարը ՀՀ վարչապետին հասցեագրված նամակով շնորհավորել է 2021թ. արտահերթ ընտրությունների

հաջող անցկացման կապակցությամբ: **Հունիսի 21-ին** ընտրությունների վերաբերյալ հայտարարությամբ հանդես են եկել ԵԽԽՎ 21 պատգամավորից կազմված պատվիրակությունը (ԵԱՀԿ, ԺՀՄԻԳ պատվիրակությունների հետ համատեղ), որում Հայաստանի արտահերթ խորհրդարանական ընտրությունները որակել են որպես մրցակցային և կարճ ժամանակահատվածում լավ կազմակերպված: Ընտրությունների վերաբերյալ դիտորդական զեկույցը ԵԽԽՎ-ում ներկայացվել է սեպտեմբերի 27-ին:

Սեպտեմբերի 23-ին ՄԱԿ ԳԱ 76-րդ նստաշրջանի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարը Նյու Յորքում հանդիպել է ԵԽ Գլխավոր քարտուղարի հետ:

Սեպտեմբերի 27-ին ԵԽԽՎ լիագումար նստաշրջանում քննարկվել և ընդունվել են Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության հումանիտար հետևանքները Լեռնային Ղարաբաղի հակամարտություն խորագրով զեկույցը, համապատասխան բանաձևը և առաջարկությունը:

Հոկտեմբերի 18-ից 19-ը կայացել է ԵԽ ՆԿ Ժողովրդավարության հարցերով զեկուցողների խմբի պատվիրակության այցը Հայաստան: Քննարկվել են ԵԽ-Հայաստան Գործողությունների ծրագրին առնչվող հարցեր:

Հոկտեմբերի 21-ին ՀՀ ԱԺ նախագահը Ստրասբուրգում մասնակցել է ԵԽ անդամ երկրների խորհրդարանների նախագահների համաժողովին: Կայացել է հանդիպում ԵԽ Գլխավոր քարտուղարի հետ:

Նոյեմբերի 8-ին հրապարակվել է ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարի **«2020թ. Լեռնային Ղարաբաղի շուրջ Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմական գործողությունների բռնկումից հետո հումանիտար և մարդու իրավունքների առումով հետևանքները»** խորագրով հուշագիրը՝ Հայաստանի պաշտոնական դիրքորոշումն արտահայտող հավելվածով:

Նոյեմբերի 3-ից 5-ը փաստահավաք առաքելությամբ Հայաստան են այցելել ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովում Հայաստանի հարցերով համազեկուցողներ Կիմո Կիլյունենը (Ֆինլանդիա) և Բորիանա Աբերգը (Շվեդիա):

Դեկտեմբերի 9-ին կայացել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի այցը Եվրոպայի Խորհուրդ (Ստրասբուրգ): Կայացել է հանդիպում ԵԽ Գլխավոր քարտուղարի հետ:

2021թ. Հայաստանում գործողության մեջ են մտել ավելի վաղ վավերացված ԵԽ հետևյալ կոնվենցիաները. Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիա, ԵԽ կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության կոնվենցիա, Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայում փոփոխություններ կատարող արձանագրություն,

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում փոփոխություն կատարելու մասին թիվ 15 արձանագրություն:

13.4 Անկախ պետությունների համագործակցություն

Հոկտեմբերի 15-ին կայացել է ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի նիստը՝ հեռավար եղանակով, որի ընթացքում, ի թիվս մեկ տասնյակ փաստաթղթերի, ընդունվել են հայտարարություններ **ԱՊՀ ստեղծման 30-ամյակի** կապակցությամբ, ինչպես նաև կենսաբանական անվտանգության և միգրացիայի բնագավառներում համագործակցությունը խթանելու մասին:

Դեկտեմբերի 28-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ Սանկտ Պետերբուրգում տեղի է ունեցել ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների ոչ պաշտոնական հանդիպումը:

Մայիսի 28-ին և **նոյեմբերի 12-ին** ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի մասնակցությամբ տեղի են ունեցել ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի թվով երկու նիստերը:

Ապրիլի 2-ին Մոսկվայում և **հոկտեմբերի 14-ին** Մինսկում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների ԱԳ նախարարների խորհրդի նիստերի ընթացքում ԱԳ նախարարներն ստորագրել և հավանություն են տվել մասնակից երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև փոխգործակցության շարունակական ամրապնդման, ինչպես նաև տարբեր ուղղություններով ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության հետագա զարգացմանը միտված փաստաթղթերին: Հաշվետու տարում կայացել է ԱՊՀ տնտեսական խորհրդի 4 նիստ:

13.5 Եվրասիական տնտեսական միություն

Հաշվետու տարում անցկացվել են **Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 3, Եվրասիական միջկառավարական խորհրդի՝ 4, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 14 նիստեր**, որոնց արդյունքներով կայացվել են մի շարք կարևոր որոշումներ, այդ թվում ստորագրվել է **«Փոխադրումների հետագծելիության համար ԵԱՏՄ-ում նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին»** համաձայնագիրը: Բաի այդ, ուժի մեջ է մտել ԵԱՏՄ երկրների աշխատողների կենսաթոշակային ապահովման մասին համաձայնագիրը: Նաև հաստատվել է «Մինչ 2025թ. եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղությունները» փաստաթուղթը, որտեղ ներդրվել են առանց արգելքների, բացառումների և սահմանափակումների՝ ընդհանուր շուկաների ձևավորումն ավարտելու մեխանիզմները, ձևակերպվել են համատեղ նորարարական և ներդրումային գործունեության զարգացման

վերաբերյալ մոտեցումները: Փաստաթղթում տեղ գտած միջոցառումների ծրագրի իրագործումը թույլ կտա ապահովել անդամ պետությունների տնտեսությունների համապարփակ զարգացումը, ավելացնել համաշխարհային առևտրում ԵԱՏՄ-ի մասնաբաժինը:

Հաշվետու տարում Ազատ առևտրի գոտու մասին համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունները շարունակվել են Իրանի, Եգիպտոսի, Հնդկաստանի և Սինգապուրի հետ:

13.6 Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն

Հաշվետու տարում շարունակվել են ՀԱՊԿ շրջանակներում իրականացվող փոխգործակցության հետագա խորացման և կատարելագործման ուղղությամբ քայլերը՝ ուշադրության կենտրոնում պահելով ՀԱՊԿ ՀԱԽ և ԱԳՆԽ մակարդակով ընդունված որոշումների իրագործումը:

Մայիսի 12-ին ՀՀ ինքնիշխան տարածք ադրբեջանական ԶՈՒ ստորաբաժանումների ներթափանցման հանգամանքով պայմանավորված՝ Հայաստանը պաշտոնապես դիմել է ՀԱՊԿ՝ ՀԱՊ հոդված 2-ով նախատեսված մեխանիզմները գործարկելու նպատակով: ՀԱՊԿ մշտական խորհրդի նիստերին ՀՀ մշտական ներկայացուցիչը շարունակաբար ներկայացրել է Հայաստանի սահմանային գոտում ստեղծված իրավիճակը:

Անհրաժեշտ աշխատանքներ են իրականացվել 2022թ. ՀԱՊԿ-ում Հայաստանի նախագահությանը նախապատրաստվելու ուղղությամբ:

ՀՀ վարչապետը մասնակցել է **օգոստոսի 23-ին**՝ Աֆղանստանում իրավիճակի կապակցությամբ ՀԱՊԿ ՀԱԽ արտահերթ նստաշրջանին (տեսակոնֆերանսի ձևաչափով), **սեպտեմբերի 16-ին** Դուշանբեում կայացած ՀԱՊԿ ՀԱԽ նստաշրջանին, որտեղ Հայաստանը ստանձնել է կազմակերպությունում նախագահությունը, ինչպես նաև սեպտեմբերի 17-ին Դուշանբեում՝ ՀԱՊԿ-ՇՀԿ համատեղ գագաթաժողովին:

Սեպտեմբերի 15-ին Դուշանբեում անցկացվել է ՀԱՊԿ ԱԳՆԽ, ՊՆԽ, ԱԽՔԿ համատեղ նիստը: **Մայիսի 18-ից 19-ը** Դուշանբեում ՀՀ ԱԳ նախարարի մասնակցությամբ կայացել է ՀԱՊԿ ԱԳՆԽ նիստը, իսկ **դեկտեմբերի 2-ին** Ստոկհոլմում՝ ԵԱՀԿ նախարարական խորհրդի շրջանակներում, ՀԱՊԿ ԱԳՆԽ ձևաչափով կայացել է ՀՀ կողմից նախաձեռնված աշխատանքային հանդիպումը:

Տարվա ընթացքում կայացած ՀԱՊԿ բարձրաստիճան նիստերի ընթացքում ընդունվել են մի շարք կարևոր հայտարարություններ, այդ թվում՝ «ՄԱԿ կանոնադրության սկզբունքներին հավատարմության հաստատման և նրանց անվերապահորեն պահպանումն ապահովելու նպատակով համագործակցության ամրապնդման մասին ՀԱՊԿ անդամ պետությունների ԱԳ նախարարների

հայտարարությունը», «Ահաբեկչական նպատակներով համացանցի օգտագործման դեմ պայքարի և կանխարգելման մասին Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Տաջիկստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարների համատեղ հայտարարությունը» և այլն:

ՀՀ և ՌԴ միջև ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի աշխատանքների շրջանակներում **նոյեմբերի 1-ից 2-ը** Երևանում կայացել է Հանձնաժողովի համանախագահների հանդիպումը:

13.7 Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն

Հաշվետու ժամանակահատվածում հետևողական քայլեր են ձեռնարկվել ՀՀ-ՆԱՏՕ ԱԳԳԾ նոր փաստաթղթի տեքստի համաձայնեցման և ընդունման ուղղությամբ: Շարունակաբար հանդիպումներ են անցկացվել ՆԱՏՕ-ի անդամ պետությունների դեսպանների և միջազգային անձնակազմի հետ փաստաթղթում ՀՀ շահերին համահունչ ձևակերպումների և դրույթների ընդգրկման համար: 2017-2019թթ. ԱԳԳԾ փաստաթղթի գործողության ժամկետը **2021թ. հոկտեմբերին** երկարաձգվել է ևս 3 ամիս ժամկետով:

ԱԳԳԾ շրջանակներում ապահովվել է ՀՀ տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությունը ՆԱՏՕ-ի կողմից կազմակերպվող դասընթացներին, աշխատաժողովներին և վարժանքներին, մասնավորապես՝ **«Գիտություն հանուն խաղաղության և անվտանգության»** (Science for Peace and Security), **«Պաշտպանական ընդլայնված կրթության ծրագրի»** (DEEP), բարեվարքության ամրապնդման, ճգնաժամերի կառավարման և փրկարարական աշխատանքներին վերաբերող հատուկ ծրագրերին:

13.8 Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն

Շարունակվել է Հայաստանի նախագահությունը Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովում, որի շրջանակներում նախաձեռնվել են մի շարք միջոցառումներ:

Հոկտեմբերի 4-ից 5-ը Ֆրանկոֆոնիայի Գլխավոր քարտուղար Լուիզ Մուշիկիվաբոյի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով գտնվել է Հայաստանում: Այցը կայացել է Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովում Հայաստանի նախագահության եզրափակիչ փուլում: Գլխավոր քարտուղարին ընդունել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը:

Հոկտեմբերի 28-ին առցանց ձևաչափով կայացել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախարարների կոմիտեի 38-րդ արտահերթ նիստը՝ նվիրված Ֆրանկոֆոնիայի 18-րդ գագաթնաժողովի անցկացմանը:

Նոյեմբերի 29-ից 30-ը Հայաստան է այցելել ՖՄԿ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի նորանշանակ ղեկավար (նստավայրը՝ Բուխարեստ) Էրիկ Պոպը՝ մասնակցելու Ֆրանկոֆոն լրագրողների միության կողմից կազմակերպված երկօրյա սեմինարին:

Դեկտեմբերի 9-ին աշխատանքային այցով Փարիզում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) գլխավոր քարտուղար Լուիզ Մուշիկիվաբոյի հետ: Զրուցակիցները քննարկել են ՖՄԿ-ում Հայաստանի նախագահության շրջանակներում նախաձեռնությունների իրականացման ընթացքը:

14. Միջազգային տնտեսական համագործակցություն

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԳՆ համակարգել է ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) և ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների միջև համագործակցությունը: Ապահովվել է ՀՀ գերատեսչությունների մասնակցությունը կազմակերպության շրջանակներում անցկացվող միջոցառումներին և փորձագիտական աշխատանքային խմբերի հանդիպումներին:

Համակարգվել է նաև ՄԱԿ Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի Սոցիալական և տնտեսական հանձնաժողովի (UNESCAP), Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO), Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) և այլ տնտեսական բնույթի կազմակերպությունների, Միջազգային Էներգետիկ Խարտիայի, ֆինանսական կառույցների և ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների միջև համագործակցությունը:

Իրականացվել են աշխատանքներ՝ համակարգելու բազմակողմ տնտեսական ձևաչափով ընթացող աշխատանքները Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (BSEC) շրջանակներում:

Դեկտեմբերի 17-ին կայացել է **Սևծովյան տնտեսական համագործակցության** (**ՍԾՏՀ**) կազմակերպության անդամ պետությունների ԱԳ նախարարների խորհրդի առցանց հանդիպումը, որին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալը հանդես է եկել ելույթով՝ անդրադառնալով ՍԾՏՀ-ՀՀ համագործակցության 30-րդ տարելիցին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ ստեղծված իրավիճակին: **Դեկտեմբերին** ՀՀ

նախաձեռնությամբ կայացել է նաև Սևծովյան ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի (ICBSS) և ՀՀ ԱԳՆ կողմից համակարգվող՝ ՍԾՏՀ տարածաշրջանում զբոսաշրջության զարգացումը COVID-19-ի պայմաններում թեմայով առցանց հանդիպում-քննարկումը, որին մասնակցել են ՍԾՏՀ անդամ երկրների տուրիզմի և մշակույթի հարցերով պատասխանատու պաշտոնյաներ:

Շարունակվել են աշխատանքները **Պարենի համաշխարհային ծրագրի** շրջանակում: Կազմակերպվել է աշխատանքային հանդիպում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների մասնակցությամբ՝ ներկայացնելու ՊՀԾ կողմից իրականացվող «Դպրոցական սնունդ» ծրագիրը, ինչպես նաև **սեպտեմբերի 21-ին** Նյու Յորքում՝ ՄԱԿ ԳԱ 76-րդ նստաշրջանի ընդհանուր քննարկումների շրջանակներում կայացած Սննդի գագաթաժողովի շրջանակներում ընդունված «դպրոցական սնունդ» կոալիցիայի (School feeding coalition) մանրամասները:

Նոյեմբերի 10-ին Վանաձորում տեղի ունեցած միջոցառման ընթացքում ՄԱԿ ՊՀԾ-ն Հայաստանի Հանրապետության կառավարությանն է փոխանցել Գեղարքունիքի և Լոռու մարզերում «Դպրոցական սնունդ» ծրագրի կառավարումը: Այդպիսով ՀՀ 8 մարզերում «Դպրոցական սնունդ» ծրագիրն ազգայնացվել է: Ըստ «Դպրոցական սնունդ ծրագրի կայուն զարգացման ազգային ռազմավարության» 2022թ.՝ Արմավիրի, իսկ 2023թ.՝ Կոտայքի մարզի դպրոցները կկազմեն «Ազգային ծրագրի» մաս:

Նախաձեռնել է Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների վերաբերյալ Վիեննայի 2014-2024 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման Հայաստանի Հանրապետության ազգային ծրագրի ու դրանից բխող այլ միջոցառումների իրագործման ժամանակացույցի վերանայման գործընթացը: ԱԳՆ առաջարկությամբ, ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է վերոնշյալ գործընթացը համակարգող միջգերատեսչական աշխատանքային խումբ: **Սեպտեմբերի 23-ին** կայացած Դեպի ծով ելք չունեցող երկրների խմբի (Group of Landlocked Developing Countries (LLDC)) նախարարական հանդիպմանը ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչն ընտրվել է խմբի բյուրոյի անդամ՝ 2022-2023թթ. ժամանակահատվածի համար:

ՄԱԿ արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հետ համագործակցությունը նախանշել է մի շարք կարևորագույն իրադարձություններ: Մասնավորապես, ՀՀ ԱԳՆ համակարգմամբ ավարտին է հասցվել ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության միջև Հայաստանում 2022-2026թթ. ներառական և կայուն արդյունաբերական զարգացման «Երկրի ծրագրային փաստաթղթի» շուրջ բանակցությունները, որը

ստորագրվել է Երևանում **նոյեմբերի 16-ին** ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի և Հայաստանում ՄԱԱԶԿ ներկայացուցիչ Անահիտ Սիմոնյանի կողմից:

15. Մարդու իրավունքների պաշտպանության հարցեր

2021 թվականին Հայաստանը շարունակել է համագործակցությունը մարդու իրավունքների ոլորտում մասնագիտացած միջազգային կազմակերպությունների հետ: Աշխատանքների հիմնական մասն առնչվել է 2020թ. աշնանը ԼՂ դեմ Ադրբեջանի սանձազերծված ագրեսիայի, ինչպես նաև դրան հաջորդած ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի ոտնձգությունների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների կոպտագույն խախտումներին:

ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի 48-րդ նստաշրջանում Հայաստանը հանդես է եկել 19 պետությունների հետ համատեղ հայտարարությամբ՝ նվիրված զինված հակամարտությունների ընթացքում միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների պաշտպանությանը:

Աշխատանքներ են տարվել միջազգային գործընկերներին ներկայացնելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ ագրեսիվ պատերազմի արդյունքում գերեվարված անձանց կարգավիճակի և միջազգային հումանիտար իրավունքի նորմերի համաձայն նրանց իրավունքների պաշտպանության խնդիրները, ջանքեր են գործադրվել նրանց անհապաղ ազատ արձակման ու հայրենադարձման ուղղությամբ:

Փետրվարի 1-ին ՄԱԿ հատուկ ընթացակարգերը (Խոշտանգումների հարցերով ՄԱԿ հատուկ զեկուցող, Բռնի անհետացման հարցերով ՄԱԿ աշխատանքային խմբի նախագահող և Արտադատական, արագացված մահապատիժների հարցերով հատուկ զեկուցող) հանդես են եկել **«Լեռնային Ղարաբաղ. բոլոր գերիները պետք է ազատ արձակվեն»** խորագրով հայտարարությամբ, որով կոչ է արվում անհապաղ ազատ արձակել ռազմագերիներին և պատանդառված այլն անձանց:

Շարունակվել է երկխոսությունը և համագործակցությունը ՄԱԿ Փախստականների հարցերով բարձրագույն հանձնակատարի (UNHCR) գրասենյակի հետ՝ ուղղված փախստականներին ու ներքին տեղահանված անձանց վերաբերող հարցերի կարգավորմանը, ինչպես նաև ԼՂ ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիայի արդյունքում ծագած հումանիտար ճգնաժամի հաղթահարմանը:

Հայաստանը շարունակել է աշխատանքները որպես «Հավասարության սերունդ» ֆորումի տեխնոլոգիաների և նորարարության ուղղությամբ թեմատիկ դաշինքի համաառաջնորդ երկիր:

Հոկտեմբերի 14-ից 15-ը տեղի է ունեցել **ՄԱԿ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի** (CCPR) իրականացման վերաբերյալ ՀՀ երրորդ պարբերական զեկույցի առցանց քննարկումը: Զեկույցի դիտարկման արդյունքներով Մարդու իրավունքների կոմիտեն, որն իրականացնում է միջազգային դաշնագրի կատարման մշտադիտարկումը, հայկական կողմին է ներկայացրել եզրափակիչ դիտարկումները:

Հայաստանը շարունակել է ակտիվ համագործակցությունը միջազգային հարթակներում՝ ընտրական գործընթացներին մասնակցության առումով:

Չնայած համավարակին **2021թ. հունիսի 20-ին** կայացած ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններին ՀՀ-ում հանդես են եկել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ԱՊՀ, ՀԱՊԿ ԽՎ, ԱՊՀ ՄԽՎ դիտորդական առաքելությունները և, առաջին անգամ, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը:

16. Գլոբալ անվտանգության և ոչ կոնվենցիոնալ խնդիրներ

Հաշվետու տարում Հայաստանը մասնակցել է ահաբեկչության դեմ պայքարի թեմայով ՄԱԿ և ԵԱՀԿ միջոցառումներին: **Հունվարին ՄԱԿ Հակաահաբեկչության կոմիտեի և ՄԱԿ ԱԽ 1373 բանաձևի ընդունման 20-ամյակի** առիթով կազմակերպված ՄԱԿ ԱԽ հանդիպման ընթացքում ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության կողմից ներկայացվել է ելույթ, որում անդրադարձ է կատարվել տարածաշրջանում ահաբեկչության սպառնալիքի ավելացման միտումներին:

Հունիսին հաստատված ՄԱԿ Գլոբալ հակաահաբեկչության ռազմավարության յոթերորդ վերանայման բանաձևի տեքստում ամրագրվել են ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության առաջարկները, մասնավորապես՝ մտահոգություն է արտահայտվել հակամարտությունների գոտիներ օտարերկրյա վարձկան ահաբեկիչների տեղափոխման, ահաբեկչության և ահաբեկչական գործողությունների կազմակերպմանն ուղղված այլատյացության աճի կապակցությամբ, ինչպես նաև ընդգծվել է մարդու իրավունքների ժխտումը՝ որպես ահաբեկչության և ծայրահեղականությանը հանգեցնող գործոն:

17. Խաղաղապահ գործունեություն

2021 թվականին ՀՀ խաղաղապահ ուժերը շարունակել են իրականացնել իրենց ծառայությունը խաղաղության աջակցությանն ուղղված առաքելությունների շրջանակներում:

Մասնավորապես, **ՄԱԿ ԱԽ 1999թ. հունիսի 10-ի 1244 բանաձևի** հիման վրա ստեղծված ՆԱՏՕ-ի «Կոսովոյի ուժեր»(KFOR) առաքելության կազմում

ծառայությունն են շարունակել 40 հայ խաղաղապահներ (2018թ. դեկտեմբերից ներառվել են կին զինծառայողներ 2+2 հերթափոխի սկզբունքով):

Լիբանանում ՄԱԿ ժամանակավոր ուժերի (The United Nations Interim Force in Lebanon-UNIFIL) կազմում Հայաստանից խաղաղապահ գործունեություն է իրականացրել 33 զինծառայող (2019թ. հունիսից ներառվել է նաև 2 կին զինծառայող):

Հայաստանը շարունակել է մասնակցությունը նաև ՄԱԿ-ի հովանու ներքո Մալիում Բազմազգ Միացյալ Կայունացման Առաքելությանը (The United Nations Multidimensional Integrated Stabilization Mission in Mali- MINUSMA) մեկ հրամանատարային սպայի մակարդակով:

ՆԱՏՕ-ի **«Հաստատակամ աջակցություն»** առաքելության շրջանակներում Գերմանիայի խաղաղապահ զորակազմի՝ Աֆղանստանից դուրս գալուց հետո հայ խաղաղապահները ևս ավարտել են գերմանական հրամանատարության ներքո իրականացվող առաքելությունը»: Սիրիայի Հալեպ քաղաքում մարդասիրական առաքելությունն է շարունակել ականազերծողներից, բժիշկներից և նրանց անմիջական անվտանգությունն ապահովող հայ մասնագետներից բաղկացած խումբը:

18. Իրավապայմանագրային դաշտ

Հաշվետու տարվա ընթացքում ընդլայնվել է երկկողմ և բազմակողմ ձևաչափով Հայաստանի Հանրապետության միջազգային իրավապայմանագրային դաշտը: 2021 թվականի ընթացքում ԱԳ նախարարության կողմից պատրաստվել և ստորագրման է ներկայացվել **58 պայմանագիր (**երկկողմ և բազմակողմ ձևաչափով), իրականացվել է **38 միջազգային պայմանագրի** վավերացման և հաստատման գործընթաց:

Մշակվել և շրջանառվել են երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի մի շարք նախագծեր, ինչպես նաև փորձաքննության է ենթարկվել միջազգային պայմանագրեր չհանդիսացող փաստաթղթեր:

19. Հյուպատոսական ծառայություն

2021թ. ընթացքում ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչությունը, արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հյուպատոսական բաժինները և ՀՀ գլխավոր հյուպատոսությունները շարունակել են իրականացնել հետևյալ գործառույթները՝

- նստավայր պետության պատկան մարմինների կողմից ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ միջազգային նորմերով սահմանված իրավունքների պաշտպանություն,

- արտերկրում ՀՀ քաղաքացիներին անձնագրերի տրամադրում,
- օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների անձնագրի վավերականության ժամկետի երկարաձգում,
- ՀՀ վերադարձի վկայականի տրամադրում,
- ՀՀ մուտքի արտոնագրերի տրամադրում,
- քաղաքացիական կացության ակտերի գրանցում,
- նոտարական գործողություններ,
- փաստաթղթերի հյուպատոսական վավերացում,
- ՀՀ քաղաքացիություն ստանալու և քաղաքացիությունը դադարեցնելու գործերի ընթացքավորում,
- ՀՀ-ում հատուկ կացության կարգավիճակ ստանալու գործերի ընդունում,
- տարաբնույթ տեղեկանքների (դատվածության և հետախուզման առկայության, քաղաքացիության պատկանելիության, հաշվառման հասցեի, ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ և այլն) տրամադրում:

Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ընդլայնվել են հյուպատոսական ծառայությունների մատուցման եղանակները՝ քաղաքացու անձամբ ներկայանալու պահանջին ստեղծելով այլընտրանք՝ քաղաքացիներին հնարավորություն ընձեռելով աշխարհի ցանկացած վայրից տեսակապով դիմել ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ՝ ստանալով ՀՀ քաղաքացու անձնագիր, ՀՀ վերադարձի վկայական և երկարաձգել անձնագրի՝ օտարերկրյա պետություններում վավերականության ժամկետը:

Պիլոտային ծրագրով ՀՀ ԱԳՆ կողմից տրամադրվում է ՀՀ-ում դատվածության և հետախուզման առկայության վերաբերյալ տեղեկանք՝ դրոշմակնիքը գեներացնող և QR-կոդով ձևանմուշով, որը հնարավորություն է տալիս **www.e-verify.am** համակարգի միջոցով ստուգել փաստաթղթի իսկությունը:

Արտաքին գործերի նախարարության էլեկտրոնային հյուպատոսական համակարգ է ներդրվել քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործառույթը: Էլեկտրոնային եղանակով հնարավոր է կատարել ծննդյան, հայրության ճանաչման, ամուսնության, ամուսնալուծության, մահվան ակտի վերականգնման, անվան, ազգանվան, հայրանվան փոփոխման գրանցումները: Համակարգի միջոցով են տրամադրվում նաև վկայականի կրկնօրինակները և ակտերի վերաբերյալ գրանցման պատճենները:

Ենթաօրենսդրական փոփոխություններ են կատարվել ՀՀ Կառավարության 2011թ. թիվ 974-Ն որոշման մեջ, որով ապահովվել է վարչարարության համաչափությունը և միասնականությունը, մասնավորապես՝ 16 տարին չլրացած ՀՀ քաղաքացիներին անձնագիր տրվում է ըստ ցանկության՝ մեկ ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

Իրավաբանական անձանց կողմից վիզայի համար ներկայացվող հրավերների և կից փաստաթղթերի ներկայացումը ներկայումս հասանելի է նաև Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի (https://e-request.am/) միջոցով, ինչը նախկինում իրականացվում էր միայն թղթային տարբերակով:

Իրականացվում են ՀՀ կողմից տրամադրվող COVID-19-ի դեմ պատվաստման սերտիֆիկատների փոխճանաչման գործընթացին ուղղված միջոցառումներ:

20. Հանդիպումներ և փոխադարձ այցելություններ

Հաշվետու ժամանակահատվածում կայացել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի, ԱԳ նախարարներ Արա Այվազյանի և Արարատ Միրզոյանի՝ արտերկիր կատարած թվով **43 պետական, պաշտոնական և աշխատանքային այցեր:**

Տեղի են ունեցել օտարերկրյա 23 բարձրաստիճան պատվիրակությունների պաշտոնական և աշխատանքային այցելություններ Հայաստանի Հանրապետություն:

Նոյեմբերի 18-ից 19-ը Երևանում կազմակերպվել է Եվրասիական տնտեսական միության Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստը, **դեկտեմբերի 21-ից 22-ը**՝ ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 20-րդ նիստը:

21. Դիվանագիտական հարաբերություններ

2021թ. դեկտեմբերի դրությամբ Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած պետությունների թիվը **178** է:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանում հավատարմագրված է 39 ռեզիդենտ և 76 ոչ ռեզիդենտ դեսպան, 29 միջազգային կազմակերպության ներկայացուցիչ, 1 գլխավոր հյուպատոս և 44 պատվավոր հյուպատոս:

2021թ. հավատարմագրեր են հանձնել 27 դեսպան և 5 միջազգային կազմակերպության ներկայացուցիչ, հավատարմագրվել են օտարերկրյա 2 պատվավոր հյուպատոս, ինչպես նաև համաձայնություն է տրվել ՀՀ-ում օտարերկրյա 18 ռազմական կցորդի:

Հաշվետու ժամանակահատվածի ավարտին արտերկրում ՀՀ-ն ունի հավատարմագրված 43 ռեզիդենտ դեսպան, ովքեր համատեղության կարգով հավատարմագրված են ընդհանուր առմամբ ևս 30 երկրում:

ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված 19 միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում են ՀՀ 10 գլխավոր հյուպատոսություն և 53 պատվավոր հյուպատոսություն:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է նաև արտասահմանյան երկրներում ՀՀ 17 դեսպանի, միջազգային կազմակերպությունում 1 ներկայացուցչի, 7 պատվավոր հյուպատոսի և 3 ռազմական կցորդի նշանակումը:

22. Դիվանագիտական դպրոց

2021թ. ընթացքում ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցում անցկացվել են վերապատրաստման երեք ծրագրեր՝ **«Հյուպատոսական գործունեություն»** (մեկամսյա), **«Դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցների»** (եռամսյա) երկու վերապատրաստումներ, որից մեկը՝ արտաքին մրցույթով ընդունված դիվանագետների համար:

Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են ՀՀ նախագահի և կառավարության աշխատակազմների, արտգործնախարարության, պետական գերատեսչությունների 61 աշխատակիցներ և 12 օտարերկրյա դիվանագետներ:

2020թ. մարտի 16-ից՝ ՀՀ-ում արտակարգ իրավիճակի հաստատման օրվանից դադարեցված և **հոկտեմբերի 5-ից** առցանց տարբերակով վերսկսած դիվանագիտական կադրերի պատրաստման ծրագրի 11 ունկնդիրները դասընթացն ավարտել են 2021 թվականին: «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» դիվանագիտական կադրերի պատրաստման հաջորդ ծրագիրը մեկնարկել է 2021թ. սեպտեմբերի 6-ից:

Հաշվետու տարում ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը փոխըմբռնման հուշագիր է ստորագրել ՄԱԿ-ի Խաղաղության համալսարանի հետ:

Դեկտեմբերի 14-ին տեղի է ունեցել Դիվանագիտական դպրոցի հրատարակած՝ «Դիվանագիտական դպրոց. վկայություններ», «Պետական արարողակարգ» և «Բանակցությունները բազմակողմ հարթակներում» գրքերի շնորհանդեսը:

Դեկտեմբերի 18-ից 29-ը ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցում առաջին անգամ վերապատրաստման դասընթաց է կազմակերպվել օտարերկրյա դիվանագետների համար: Դասընթացին մասնակցել են Իրաքյան Քուրդիստանի տարբեր գերատեսչությունների պետական ծառայողներ:

23. Միջազգային հանրային կարծիք

2021թ. շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը,

մեր երկրի միջազգային հեղինակության ամրապնդմանն ուղղված աշխատանքները:

Հանրապետության վարչապետը և նախագահը, ինչպես նաև ԱԳ նախարարները մի քանի տասնյակ հարցազրույցներ են տվել միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներին, հանդես են եկել մամուլի ասուլիսներով՝ ներկայացնելով տարածաշրջանային և միջազգային տարբեր գործընթացների խնդիրների ու դրանց վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումները:

ՀՀ ԱԳ նախարարն ունեցել է **30 ելույթ, 19 մամուլի ասուլիս և ճեպազրույց, 7 հարցազրույց,** այդ թվում՝ միջազգային լրատվամիջոցների հետ, որոնցից են «РИА Новости», «Al Arabiya», «IRNA» լրատվական գործակալությունները, «BBC weekend» ծրագիրը, «Le figaro» օրաթերթը և այլն:

ԱԳ նախարարությունը հանդես է եկել **43 հայտարարությամբ**, հրապարակվել են ավելի քան **300 մամուլի հաղորդագրություններ:**

Շարունակվել է աջակցությունը միջազգային լրատվամիջոցներին՝ լուսաբանելու Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները:

2021թ. ԱԳՆ-ում երկարաժամկետ հավատարմագրում են ստացել տեղական լրատվամիջոց ներկայացնող լրագրողներ, օտարերկրյա լրատվամիջոցների հայաստանյան ներկայացուցչությունների թղթակիցներ, Հայաստանում մշտական ներկայացուցչություն չունեցող միջազգային լրատվամիջոցների լրագրողներ՝ ընդհանուր առմամբ **177 անձ:**

Հետպատերազմյան շրջանում Հայաստանում տեղի ունեցող զարգացումները, ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունները, ինչպես նաև Ադրբեջանի կողմից ՀՀ սուվերեն տարածք ներխուժելու հանգամանքով պայմանավորված Հայաստան-Ադրբեջան սահմանագծին տեղի ունեցող բախումները և տարածաշրջանային զարգացումները լուսաբանելու նպատակով, բացի տարեկան հավատարամագրում ունեցող օտարերկրյա լրագրողներից, Հայաստան են ժամանել և ՀՀ ԱԳՆ-ում կարճաժամկետ հավատարամագրում են ստացել նաև օտարերկրյա լրատվամիջոցների այլ ներկայացուցիչներ:

Ընդհանուր առմամբ 2021թ. ՀՀ ԱԳՆ-ում կարճաժամկետ հավատարմագրում է ստացել ավելի քան 500 օտարերկրյա լրագրող:

ՀՀ վերաբերյալ հաղորդաշարեր և հոդվածներ պատրաստելու նպատակով Հայաստան են այցելել մի շարք միջազգային լրատվամիջների ներկայացուցիչներ՝ մասնավորապես Agence France-Presse, the Economist, Le Monde, BBC, Le Figaro Magazine, VICE News, Al Jazeera, Россия 24, ТАСС, Deutsche Welle, և այլն:

ԱԳՆ ներգրավված է եղել **նոյեմբերի 18-ից 19-ը** Երևանում կայացած Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստի՝ օտարերկրյա լրատվամիջոցների կողմից լուսաբանման կազմակերպման աշխատանքներին:

Հայոց ցեղասպանության 106-րդ տարելիցի կապակցությամբ օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից ՀՀ ԱԳՆ է տրամադրվել և լրատվամիջոցներին փոխանցվել հավատարմագրման երկրների օտարերկրյա պետությունների ղեկավարների, հասարակական-քաղաքական հայտնի գործիչների, հայանպաստ հայացքներով աչքի ընկնող պաշտոնյաների թվով 73 տեսաուղերձ:

2021թ. ընթացքում արտերկրում ՀՀ դեսպանությունների հետ համատեղ և վերջիններիս միջոցով օտարերկրյա մամուլում հրապարակվել են հայկական կողմի դիրքորոշումները ներկայացնող մի շարք հոդվածներ: Հոդվածներ են հրապարակվել նաև **«Greek City Times», «Times», «The Guardian», «LA Times»** և այլ պարբերակներում:

Պարբերաբար կազմակերպվել են օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների հարցազրույցներ հավատարմագրման երկրների առաջատար լրատվամիջոցների հետ:

ԱԳՆ ակտիվորեն վարել է սոցիալական մեդիայի տարբեր հարթակներում ԱԳՆ պաշտոնական էջերը, ինչպես նաև համակարգել ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների պաշտոնական հաշիվների աշխատանքը:

Հաշվետու տարում տեղի ունեցած իրադարձությունների և միջոցառումների մասին ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն տեղեկատվությունը տեղադրվել է ԱԳՆ պաշտոնական կայքէջում, իսկ տեղեկատվությունն առավել օպերատիվ և հասանելի տարբերակով միջազգային հանրությանը ներկայացնելու նպատակով օգտագործվել են հետևյալ պաշտոնական հաշիվները.

- Twitter (@MFAofArmenia, @ArmDiplo, @AraratMirzoyan, @ArmSpoxMFA),
- Facebook (@MFA.Armenia, @ArmDiplo, @Armenia, @ArmSpoxMFA),
- Telegram (ՀՀ ԱԳՆ/MFA of Armenia),
- Youtube (Ministry of Foreign Affairs of Armenia),
- Instagram (@mfa_of_armenia),
- Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության Երևանում կայացած գագաթաժողովի պաշտոնական կայքէջը, ֆեյսբուքյան էջը և թվիթերյան հաշիվը: Présidence arménienne du Sommet de la Francophonie @SommetEVN2018,
- Ցեղասպանությունների կանխարգելման ՀՀ ԱԳՆ օրակարգի ֆեյսբուքյան և թվիթերյան հաշիվները (Yerevan Global Forum, @AgendaToPrevent):

Շարունակվել են ԱԳՆ թվային դիվանագիտության թիմի կողմից կառավարվող «Armenia» սոցիալական մեդիա հարթակների աշխատանքները՝ ուղղված Հայաստանի ներկայացմանը: